Նախագիծը բերել էր Հայկ Գրիգորյանը՝ ավագանիներից, որը հեռացել է Հայկ Մարությանից: Սա մի քանի անգամ մերժվել էր: Իսկ այսօր այդ տղան բերեց՝ որպես չզեկուցվող հարց, ու անցկացրին: Վերջերս նկատում եմ նրա կողմից տարօրինակ պահվածք: Կարծում եմ՝ ՔՊ-ի հետ առեւտուր է տեղի ունեցել, որը կերեւա մոտակա ժամանակներս:

Կարդացեք՝ էջ 4

Էկոնոմիկայի նախարարը գրում է՝ այսքան միրգ ու ծաղիկ է արտահանել... նա լավ գիտի՝ ինչ ա արտահանվում: Մենք էլ ենք ուղիներ փնտրում՝ արտահանելու: Մենք տեղական շուկայում միշտ մեր ապրանքը վաճառել ենք: Թող նախարարը տվյալներ տա՝ ո՞ւր են արտահանում ու ի՞նչ, ես ասում եմ՝ բոլորի մոտ նույնն է, լավ վիճակ չի:

Կարդացեք՝ էջ 6

Խայտառակ ընտրություններ էին: Ես գիտեի, որ ՔՊ-ն տանելու է իր 30, առավելագույնը՝ 35 տոկոսը, էդ 10-15 տոկոսը որտեղի՞ց ավելացավ, չգիտեմ: Կարծում եմ, որ էդտեղ ինչ-որ կեղծիքներ, մախինացիաներ են եղել, ուղղակի չեմ կարող ասել, փաստեր չունեմ: Վարչական ռեսուրսը, բանակը, ուժայիններն օգտագործել են, արդարացի չէ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 103 (4238), 25 հունիս, հինգշաբթի, 2026

www.hraparak.am



Հշխանությունը մտադիր է մեգահամայնքներ ձեւավորել, շրջանառության մեջ է դրվել օրենքի նախագիծ, որով առաջարկվում են արդեն խոշորացված համայնքների նոր խոշորացումներ: Առաջին փուլում դիտարկում են Արարատի մարզի Արարատ եւ Վեդի համայնքների միավորումը, նախագծում նշված է՝ ստեղծվում են համայնքային փնջեր: «Արարատ» անվանումով փնջում կներառվեն Արարատ եւ Վեդի համայնքները՝ դրանց կազմում ընդգրկված 32 բնակավայրով: Երկրորդ համայնքային փունջը կլինի Լոռու մարզի Վանաձորը, որում ներառվելու են ներկայիս Վանաձոր եւ Փամբակ համայնքները՝ վերջիններիս կազմում ընդգրկված 22 բնակավայրով: Այսպիսով, առաջարկվող ծրագրում ներգրավված են լինելու 4 համայնք, 54 բնակավայր, որոնց միավորման արդյունքում ձեւավորվելու է 2 համայնք: Այլեւս գաղտնիք չէ, որ այս գործընթացը ոչ թե տեղական ինքնակառավարման զարգացմանն է ուղղված, այլ նախընտրական հստակ հաշվարկներ է պարունակում: Ժամանակին ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանը խիստ քննադատում էր այս գործընթացը՝ պնդելով, թե այն տանում է «գյուղերի ամայացման», իսկ այսօր նրա գլխավորած կառավարությունը ոչ միայն շարունակում է այդ քաղաքականությունը, այլեւ նոր թափ է հաղորդել դրան: Խոշորացմանը հաջորդելու են ընտրություններ, եւ պարզ է, որ Փաշինյանը հիմիկվանից մտածում է գալիք ընտրությունների մասին՝ նպատակ ունենալով չեզոքացնել ոչ ցանկալի համայնքապետերին:

2025թ. դեկտեմբերի 28-ին՝ տարեվերջյան պատարագի օրը, որին մասնակցում էր Նիկոլ Փաշինյանը, ՔՊ-ի պաշտոնական կայքի՝ Civic.am-ի հետ զրույցում քաղաքացին՝ հենց ուղիղ եթերում բռնության կոչ էր հնչեցրել՝ կաթողիկոսին ուղղված: Լրագրողի հարցին՝ «ինչ պետք է անել, որ Կտրիճ Ներսիսյանը հեռանա», պատասխանել էր. «Մի հատ քար տփեն գլխին, սատկացնեն»: Ավելի ուշ պարզվեց, որ նա Գառնու համայնքապետարանի աշխատակից Էդվարդ Ստեփանյանն է՝ «Ջնդոյի Էդո» մականվամբ: Հանրային աղմուկից եւ պահանջներից հետո դեպքի վերաբերյալ հունվարի 7-ին նախաձեռնվեց քրեական վարույթ՝ Քրօր. 330-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (բռնություն գործադրելու հրապարակային կոչ), սակայն պարզվում է՝ առայսօր մեղադրյալ չի ներգրավվել: Կաթողիկոսին սպանելու կոչ հնչեցնելուց 6 ամիս անց դիմեցինք Քննչական կոմիտե՝ ի վերջո, գործով անցնող մեղադրյալ կմ, պատասխանեցին՝ ոչ, չկա: Ասացին՝ քննիչը դիմել է հսկող դատախազին՝ քրեական հետապնդում հարուցելու համար, սակայն դատախազը մերժել է: Ահա այսպիսի արդարադատություն:

Եժովներն ու բերիաները

Վստահ եմ, որ Աննա Վարդապետյանը, Անդրանիկ Սիմոնյանն ու Արթուր Պողոսյանը ժամանակին շատ են դիտել 1937 թվի մասին կինոֆիլմեր, եւ նրանց ամենասիրելի հերոսները եղել են Յագոդան, Եժովն ու Բերիան: Կարծում եմ՝ Նիկոլ Փաշինյանը ոչ միայն Պապ թագավորի, այլ նաեւ Ստալինի, Պինոչետի կերպարներով է ժամանակին ոգեշնչված եղել, եւ ուժի ու հզորության մասին նրա պատկերացումները սահմանափակվում են մարդկանց բռնել-նստեցնել-դատելու գործողություններով: Նրանք երեւի տեսել են, թե ինչպես էին 37 թվին սեւ «վորոնյոկները» լուսումթին գնում իրենց զոհերի տուն՝ այնպես, որ շենքի բոլոր բնակիչներն իմանային, երկրով մեկ ահուսարսափ տարածվեր, ու գիշերային ամեն ճռռոցից, մոտակայքով անցնող ամեն մեքենայի ձայնից մարդկանց սիրտը թփրտար, եւ բոլորն անխտիր սպասեին գիշերային դահիճներին: Երեկ ընդդիմադիրներից մեկը մեր լրագրողին ասել էր, թե տունը միշտ մաքուր են պահում, հագուստն էլ կողքերը դրած, որ արագ հագնվեն ու գնան իրենց բերման ենթարկելու եկածների հետ: 2018-ին մենք ազգովի դեմոկրատիա եւ ազատություն էինք երազում, մարդու իրավունքների, խոսքի ազատության, ընտրական իրավունքի ընդլայնում, ստացանք սողացող ստալինիզմ՝ գիշերային ձերբակալություններով, անհիմն ու նենգ կալանավորումներով: Երեւի նիկոլական դատավորներն էլ «եռյակների» օրինակով են շարժվում: Տասնյակ տարիներ իր թերթում քաղաքական հետապնդումների եւ անհիմն կալանավորումների դեմ հոդվածներ հրապարակած, անմեղության կանխավարկածի խախտումները դատապարտած Նիկոլ Փաշինյանը գերազանցեց իր նախորդներին՝ մարդու իրավունքների ոտնահարման տեսանկյունից: Պարզվեց՝ կալանքը նրա ամենասիրելի գործիքն է, քաղաքական հետապնդումը՝ իր աթոռը պաշտպանելու միջոց, իսկ քաղաքական հակառակորդները՝ ոխերիմ թշնամիներ:

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը նամակ է գրել Ռուսաստանի արդյունաբերության եւ առեւտրի նախարար Անտոն Ալիխանովին, խնդրել իրեն հնարավորություն տալ՝ մասնակցելու հուլիսի 6-7-ը Եկատերինբուրգում կայանալիք առեւտրատնտեսական ֆորումին: Պապոյանը, ըստ նախարարության աղբյուրների, մեկնում է, որ ռուսական կողմի հետ քննարկի Հայաստանից արտահանման խնդիրները, ռուսական սանկցիաների հարցը: Սակայն մինչ այս պահը նամակին պատասխան չի եկել. Ռուսաստանում մտածում են՝ մերժե՞լ Պապոյանի մասնակցության հայտը, թե՞ ընդունել՝ նախարարին փորձելով նվաստացնել ֆորումի ընթացքում: Փաստորեն, իշխանությունը ջանքեր է գործադրում հայ-ռուսական հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ:

ճնշե՞լ է, թե՞ չի ճնշել

Ընդդիմադիր դաշտից մեզ պատմեցին, որ ՔՊ-ական պատգամավոր, ռուս ազգային փոքրամասնության ներկայացուցիչ Ալեքսեյ Սանդիկովը, որն այս ընտրություններին եւս ՔՊ-ի փոքրամասնությունների ցուցակում է ընդգրկված եւ անցել է խորհրդարան, նախընտրական շրջանում տեռորի է ենթարկել իր ռուս հայրենակցուհուն՝ «Հայաստան» դաշինքի ցուցակով առաջադրված Լիլիա Արեսկինային: Հորդորել է չմտնել պայքարի մեջ, խոչընդոտել է նրա քարոզարշավը, սպառնացել, որ հարկայինին կուղարկի նրա եղբայրների ընկերությունը, որոնք շինարարական բիզնեսով են զբաղվում: Ալեքսեյ Սանդիկովը հերքեց այդ լուրերը, ասաց, որ Լիլիային հեռակա է ճանաչում՝ իր կինն է ավելի շատ ճանաչում. «Ինձ ի՞նչ՝ կառաջադրվեր, չէր առաջադրվի»: «Եթե արդյունքներով նայենք՝ Ֆիոլետովոյում էլ, Լերմոնտովոյում էլ ՔՊ-ն պարտվել է, որովհետեւ պրոռուսական ազդեցությունն է գործել, կապը մեծ է: Այդ ինչպե՞ս ստացվեց... Ես չգիտեմ էլ՝ ինքը քարոզչություն արել է, չի արել»: Ասաց՝ հեքիաթների ժանրից է, թե ՊԵԿ-ով է սպառնացել: «Ընտրություններից առաջ էլ բոլոր հարցումները որ նայում էինք, հաստատ, «Հայաստան» դաշինքը չէր երկրորդ պառլամենտական ուժը, որ կարող էր այդ մանդատը վերցնել, հետեւաբար՝ տեսականորեն իմաստ էլ չկար, որ ազդեի այդ թեկնածուի վրա: Բացի այս, Արեսկինան ոնց որ թե իրանց առաջին համարը չէր, այսինքն՝ տրամաբանական կապ էլ չկա, որ ես երրորդ քաղաքական ուժի երրորդ համարի նկատմամբ ինչ-որ բաներ անեի, չգիտեմ՝ ինչ բամբասանքներ են, իմ հետ հաստատ կապ չունեն»:

ՎԻԿՏՈՐ ԴԱԼԼԱՔՅԱՆԸ՝ 23 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Տերեկ «Հրապարակի» խմբագրություն էր այցելել ԱԺ նախկին պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը: Նա բերել էր իր գիրքը՝ «Վազգեն Սարգսյան. ականատեսի հիշողություններ», որտեղ ներկայացված են նրա հիշողությունները պաշտպանության նախարար, վարչապետ Վազգեն Սարգսյանի մասին, իրենց համագործակցության դրվագները, փոխհարաբերությունների ուշագրավ նրբերանգները: Այս գիրքը վաճառքում չկա, Վիկտոր Դալլաքյանն այն նվիրում է անձամբ: «Հրապարակին» էլ էր բերել՝ նվիրելու: Տեղեկացանք, որ մոտ օրերս գիրքը նաեւ Վազգեն Սարգսյանի թանգարանին է նվիրելու:



Օգտվելով առիթից՝ մենք հիշեցինք 2003 թվականի իրադարձությունները, երբ հերթական նախագահական ընտրություններից հետո Սահմանադրական դատարանում քննվում էր ՀՀ նախագահի թեկնածու Ստեփան Դեմիրճյանի դիմումը՝ նախագահական ընտրություններն անվավեր ճանաչելու պահանջով, եւ ՍԴ-ում Ս. Դեմիրճյանի լիազոր ներկայացուցիչներն էին Վիկտոր Դալլաքյանը եւ փաստաբան Աշոտ Սարգսյանը: Այդ պահին Վ. Դալլաքյանն ԱԺ պետահիրավական հանձնաժողովի նախագահն էր՝ «Միասնություն» դաշինքի անդամ: Եվ քննության արդյունքում ՍԴ-ն՝ Գագիկ Հարությունյանի նախագահությամբ, 2003 թ. ապրիլի 18-ին աննախադեպ որոշում կայացրեց՝ մեկ տարվա ընթացքում վստահության հանրաքվե անցկացնելու վերաբերյալ, որով կպարզվեին նախագահական ընտրությունների իրական արդյունքները: Դրանով իսկ ՍԴ-ն մեծ կասկածի տակ էր դնում 2003-ի ընտրությունների արդյունքները: Մենք պարոն Դալլաքյանին խնդրեցինք մեկնաբանել այդ որոշումը, թե ինչպես հաջողվեց նման արդյունքի հասնել: Նա ասաց. «Չնայած ես հարցազրույցներ չեմ տալիս, սակայն ձեր այդ հարցին այսպես կպատասխանեմ՝ մեր փաստարկներն այնքան հզոր եւ հիմնավոր էին, իսկ նախագահական ընտրությունների արդյունքները՝ այնքան աղաղակող չափով կեղծված, որ Սահմանադրական դատարանին այլ ելք չէր մնում, քան ընդունել այդօրինակ որոշում»:

Այդ օրերին «Հայկական ժամանակը» գրեց, որ ՍԴ որոշումից հետո աշխարհահռչակ դիրիժոր Օհան Դուրյանը Սահմանադրական դատարանում համբուրեց Ստեփան Դեմիրճյանի լիազոր ներկայացուցիչ Վիկտոր Դալլաքյանի ճակատը՝ ասելով, որ նա արեց հնարավոր ամեն ինչ՝ ժողովրդի շահերը պաշտպանելու համար:

Սակայն մեկ տարվա ընթացքում չկայացավ վստահության հանրաքվեն: Նախագահական ընտրություններին հաջորդեցին 2003-ի ԱԺ ընտրությունները, որին մասնակցում էր նաեւ «Արդարություն» դաշինքը՝ Ստեփան Դեմիրճյանի գլխավորությամբ, իսկ մեծամասնական ընտրակարգով Վանաձորից պատգամավոր ընտրվեց Վիկտոր Դալլաքյանը, որը դարձավ «Արդարություն» խմբակցության քարտուղարը: Նոր խորհրդարանում արդեն նա «Հանրաքվեի մասին» իր իսկ՝ նախկինում հեղինակած օրենքում օրենսդրական փոփոխություն առաջարկեց, որով պետք է հնարավոր դառնար վստահության հանրաքվեի իրականացումը: Այդ նախագիծը 2004-ի սկզբին ընդգրկվել էր ԱԺ նստաշրջանի օրակարգում, որպեսզի ունենային օրենսդրական հիմք՝ վստահության հանրաքվե անելու համար: Սակայն այն խորհրդարանում այդպես էլ չքննարկվեց, քանի որ խորհրդարանական մեծամասնությունը դրան դեմ էր եւ համառորեն չէր ուզում այն քննարկել եւ ընդունել: Իսկ 2004 թ. մարտին սկսվեց հանրահավաքային շարժում՝ վստահության հանրաքվե անցկացնելու պահանջով, «Արդարություն» դաշինքի նախաձեռնությամբ, որի օպերատիվ շտաբը ղեկավարում էր Դալլաքյանը: Շարժումն իշխանությունների կողմից վայրագությամբ ճնշվեց, եւ տեղի ունեցան 2004 թ. ապրիլի 11-12-ի դեպքերը, երբ ջրցան մեքենաներով, մահակներով ծեծին ենթարկեցին ու ցրեցին Բաղրամյան պողոտայում հավաքված խաղաղ ցուցարարներին:

ՀԳ. *Հայաստանի ազգային գրադարանի շտեմարանում հասանելի են Վիկտոր Դալլաքյանի գրքերը՝ Մեր ապագայի բանալիները /Վ. Ե. Դալլաքյան. - Երեւան: Ոսկան Երեւանցի: Հեղ. հրատ., 2007. - 119 էջ:*

Վազգեն Սարգսյան. ականատեսի հիշողություններ /Վ. Ե. Դալլաքյան: Առաջաբանի հեղինակ՝ Վ. Մնացականյան: [Խմբագիր եւ սրբագրիչ՝ Ս. Հարոյան]. - Երեւան: «ՎՄՎ-Պրինտ» հրատ., 2026. - 95 էջ:

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔՊ-ն գոհ է Առուշից, նա ընտրությունների է պատրաստվում

Երեկ տեղեկացանք, որ Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի պատիժն ազատազրկմամբ չի փոխարինվի՝ Հակակոռուպցիոն դատարանը մերժել է Պրոբացիայի ծառայության միջնորդությունը, որով ծառայությունն առաջարկում էր համայնքապետի պաշտոնը չլքելու հանգամանքը դիտարկել որպես դատարանի դատավճիռը չկատարելու հանգամանք եւ նրան նորից կալանավորել ու ազատազրկման դատապարտել: Ինչպես նախկինում գրել էինք՝ Նիկոլ Փաշինյանի հրահանգով իրավապահ համակարգն Առուշի վերաբերյալ այս որոշումը ձգձգեց ու պահեց մինչեւ խորհրդարանական ընտրությունների ավարտը, որ ըստ նախընտրական փուլում նրա կատարած աշխատանքի որոշում կայացնեն:

Դատելով այս որոշումից՝ Առուշը խելոք գառի պես ծառայել է ՔՊ-ին, ամբողջ ուժով աշխատել է իշխանության համար, եւ Նիկոլ Փաշինյանը գոհ է նրա աշխատանքից: Գորիսի մեր աղբյուրներից տեղեկացանք, որ Առուշանյանը հավակնում է աշնանը սպասվող ՏԻՄ ընտրություններին կրկին իր թեկնածությունն առաջադրել համայնքապետի պաշտոնում: Այս անգամ Գորիսը կրկին խոշորացվում է՝ միանալով Տեղ, Տաթեւ համայնքներին, եւ ընտրված համայնքապետը մինի մարզպետիկ է դառնում: Սակայն տեղեկացանք, որ ՔՊ-ի Սյունիքի պատասխանատու, պատգամավոր Արմեն Խաչատրյանը Փաշինյանին համոզում է, որ Գորիսում իրենց ստացած ձայները ոչ այնքան Առուշի, որքան իր շնորհիվ են եղել: Իսկ Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցը, որ մարզի դատախազի հորաքրոջ որդին է, նախկին մարզպետի՝ Մելիքսեթ Պողոսյանի քրոջ որդին, ակնկալում է, որ իրեն պիտի ՔՊ-ն առաջադրի, քանի որ իր ղեկավարած Տեղում ՔՊ-ն 52 տոկոս ձայն է ստացել, Գորիսում՝ մոտ 48, իսկ Տաթեւում՝ ավելի քան 60 տոկոս: Այստեղ մարզպետի գործոնն է որոշիչ եղել, որը Տաթեւի վարչական ղեկավար Գոռ Մինասյանի հետ քարոզարշավի վերջին օրերին ակտիվ քարոզարշավ է արել: Ի դեպ, Գոռ Մինասյանն այդ ժամանակ վարչական վերահսկողության տակ էր, իսկ ընտրությունների հաջորդ օրը նրա նկատմամբ տնային կալանք սահմանեցին:

ՍԴ-Ն ԱՐԴԵՆ ԽԱԽՏԵԼ Է ԿԱՐԳԸ՝ ՔՊ-ԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՐՁՐԵԼ

Հունիսի 26-ին ՍԴ-ն քննելու է 7 քաղաքական ուժերի դիմումները՝ ընտրությունների արդյունքները վիճարկելու վերաբերյալ: Մեզ հետ զրույցում ՍԴ նախկին դատավոր **Ալվինա Գյուլումյանը** հայտնեց, որ, ի տարբերություն նախորդ տարիներին քննված նմանատիպ գործերի, այս անգամ ՍԴ-ն գործող պրակտիկայից նախադեպային շեղում է արել. «Միակ բանը, որ Սահմանադրական դատարանի պրակտիկայից նախադեպային շեղում էր, ըստ իս, այն էր, որ գործին մասնակից են դարձրել, էսպես ասած, հաղթող ուժին: Նախկինում նման պրակտիկա չենք ունեցել, այսինքն՝ պատասխանողը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն էր, նրանք էլ պատասխանում էին: Այս տրամաբանությամբ եթե մասնակից են դարձրել ՔՊ-ին, ուրեմն ընտություններին մասնակից բոլոր ուժերին պետք է մասնակից դարձնեն: Այսինքն, 7 քաղաքական ուժ է դիմել, մեկին էլ իրենք են մասնակից դարձրել, նույն տրամաբանությամբ՝ պետք է մյուս 10 ուժերին էլ մասնակից դարձնեին»:

Հարցին, թե նման ծավալի գործերը մեկ վարույթում կարո՞ղ է ՍԴ-ն քննել եւ սահմանված ժամկետում ավարտել գործի քննությունը, Գյուլումյանը պատասխանեց. «Լավ քննելու դեպքում հնարավոր է, որ ժամկետի մեջ տեղավորվեն: Ես հիշում եմ, երբ 1996-ի ընտրություններն էինք քննում, իսկ այն ժամանակ մենք գնացել էինք ընդհուպ քվեաթերթիկների նոր հաշվարկի, մենք կարողացանք տեղավորվել սահմանված ժամկետի մեջ, քանի որ աշխատում էինք գիշեր-ցերեկ: Այդ պահերին ՍԴ-ն սովորական աշխատանքային ռեժիմով չի աշխատում: Եթե նկատեցիք՝ աշխատակարգային որոշումն էլ (7 քաղաքական ուժերի դիմումները մեկ վարույթում քննելու որոշումը՝ խմբ.) ուշ ժամի տեղի ունեցավ: Դա տարօրինակ բան չէ, քանի որ կա ժամանակային սահմանափակում, դրա համար կիրակի էլ կարող է լինել, գիշեր էլ կարող է լինել»:

Անդրադառնալով Սեդա Սաֆարյանի մասնակցությանը գործի քննությանը, Գյուլումյանը նշեց. «Այստեղ խոսքը միայն Արման Բաբաջանյանի հետ ունեցած քաղաքական կապի մասին չէ: Չգիտեմ՝ ինչ դիմում է ներկայացրել նրա բացարկի հարցով «Հայաստան» դաշինքը, բայց այստեղ կա նաեւ նրա՝ որպես փաստաբան մասնակցելը մյուս ուժի ղեկավարի նկատմամբ մարտի 1-ի գործով, որն առավել կարեւոր հիմք է, որպեսզի նրա անաչառությունը կասկածի տակ դրվի»: Գյուլումյանն ընդգծեց, որ ՍԴ որոշման համար հարկավոր է, որ ՍԴ դատավորներից 5-ը գործի քննության ժամանակ կողմ քվեարկի ընդունվող որոշմանը. «Այստեղ դատարանի դատավորների թվի մեծամասնությամբ է եւ ոչ թե մասնակցող դատավորների թվի»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՀԳ. *Երեկ Սահմանադրական դատարանը պարզաբանում տարածեց այն մասին, որ Սեդա Սաֆարյանը մասնակցելու է գործի քննությանը, քանի որ որեւէ ՍԴ դատավորի մասնակցությունը կարող է բացառվել, եթե ՍԴ մյուս դատավորներից նման միջնորդություն լինի: Այսինքն, ընդդիմության դիմումը՝ Սաֆարյանին գործի քննությունից հեռացնելու մասին, բավարար չէ:*

ԴԻՆԱՄԻԿ ԶԱՐԳԱՑՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ, ՄԻ ՕՐ ԼԱՎ ԿԼԻՆԻ, ՄԻ ՕՐ՝ ՎԱՏ, ՀՈ ԹՇՆԱՄԻ ՉԵ՞ՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ

Հարցազրույց ՔՊ խմբակցության պատգամավոր, ազգային փոքրամասնության ներկայացուցիչ **Ալեքսեյ Սանդիկովի** հետ:

- Ձեզ համար կանխատեսելի՞ էր, որ այն ուժը, որի գաղափարների կրողն եք Դուք, 50 տոկոսի շեմն էլ չի հաղթահարի՝ նկատի ունենալով նախընտրական բարձրագոչ հայտարարությունները, որ սահմանադրական մեծամասնություն եք վերցնելու:

- Ժողովուրդն է կատարել իր ընտրությունը, մենք էլ պարտավոր ենք հարգել: Ի դեպ, մնացած քաղաքական ուժերն էլ ասում էին, որ մենք ընդհանրապես շանս չունենք անցնելու:

- Հիմա էլ են պնդում, որ եթե կեղծիքներ թույլ չտայիք, պարտվելու էիք:

- Էն, որ ասում են՝ մի բան էլ դու պնդի: Եթե ընդհանուր տեխնիկական անճշտություններ կան, դա այլ հարց է, բայց ԿԸՀ-ի հայտարարության մեջ ամեն բան ասվում է: Ընդհանուր առմամբ, դրանք չեն ազդել ընտրությունների արդյունքների վրա:

- Տեխնիկական անճշտությո՞ւն էր ԲՀԿ-ին խորհրդարանից դուրս թողնելը:

- Այնպես եք ասում՝ դուրս թողնել, ոնց որ մեկն ընդեղ նստած էր, վինտիլները բացում էր՝ թողնում էր կամ չէր բացում՝ չէր թողնում: Դրանք լուրջ խոսակցություններ չեն:

- Մոտավորապես էդպես էլ եղավ, մեկը՝ Վահագն Հովակիմյանը, Փաշինյանի ցուցումով երկու ընտրատեղամասի արդյունքները չեղյալ հայտարարեց՝ առանց վերաքվեարկություն նշանակելու, եւ ստացվեց, որ ԲՀԿ-ն դուրս մնաց խորհրդարանից:

- Ես այդ մտքի հետ համամիտ չեմ, ԿԸՀ-ն կատարել է իր աշխատանքը, համոզված եմ, որ ԿԸՀ-ն իր առջեւ քաղաքական խնդիր չի դրել եւ չէր էլ կարող դնել:

- Ինչո՞ւ չէր կարող դնել, մոռացվե՞լ եք, թե Վահագն Հովակիմյանն ով է՝ ՔՊ-ական, Փաշինյանի երկար տարիների ենթական:

- Ուրիշ դաշտ եք տանում, որին համակարծիք չեմ:

- Կարո՞ղ է պնդեք նաեւ, որ ընտրություններին վարչական ռեսուրս չի կիրառվել, չեն ճնշել, ահաբեկել ընտրողին:

- Ես չունեմ նման ինֆորմացիա, չեմ էլ լսել այդ մասին:

- Լավ, ո՞նց եք պատկերացնում ՌԴ-Հայաստան փոխհարաբերությունները, իշխանականները վստահեցնում էին, թե հունիսի 7-ից հետո ամեն բան իր տեղը կընկնի, Փաշինյանը պատրաստվում է Ռուսաստան մեկնել: Բայց տեսնում ենք, որ Ռուսաստանը վճռական է տրամադրված, տնտեսական սանկցիաները թուլացնելու փոխարեն՝ ավելի են խստացվում:

- Հեշտ ժամանակներ չեն, իրենց մոտ էլ հեշտ ժամանակներ չեն, ռուս-ուկրաինական պատերազմի տեսանկյունից ամեն ինչը հարթ չի ընթանում: Իրենց մոտ էլ է նախընտրական, սեպտեմբերին Պետդումայի ընտրություններ ունեն: Դինամիկ զարգացող հարաբերություններ են, մի օր լավ կլինի, մի օր՝ վատ, հո թշնամի չե՞նք դառնալու իրար:

- Բայց ոնց որ այդ ճանապարհին ենք:

- Չէ, չէ, մի երկու ամսից իրենց ԱԺ-ն կձեւավորվի, մերը եւ պառլամենտական հարթակում երկխոսության ֆորմատը կբացվի, կշարունակենք շփումները եւ կզարգացնենք մեր հարաբերությունները:

- Ռուսաստանը Հայաստանի իշխանությանն ընտրության առաջ է կանգնեցրել՝ կամ ԵՄ եք գնում, կամ՝ մնում ԵԱՏՄ-ում:

- Քաղաքական մեսիջ է, նորմալ է, երբ երկընտրանքի պահը գա, վարչապետն ասել է՝ մենք մեր ընտրությունը կկատարենք, բայց դեռ նման բան չենք տեսնում:

- Իսկ չե՞ք կարծում, որ այսպես շարունակվելու դեպքում Հայաստանի տնտեսությունը կարող է պայթել:

- Ես առաջարկում եմ՝ վերլուծեք Վրաստանում տեղի ունեցածը, երբ այդ երկիրն ընկավ ռուսական էմբարգոյի տակ, մեկ-երկու տարի արտահանման ծավալները նվազեցին, մինչեւ իրենք իրենց ապրանքների ստանդարտները համապատասխանեցրին եվրոպական շուկային, հիմա իրենց արտահանման ծավալները զգալի կերպով գերակշռում են, իրենք կարգավորել են իրենց ապրանքները դրսի շուկաների համար: Մի երկրից կախված լինելն էլ մի բան չի, հասկացանք՝ ԵԱՏՄ շուկան մեր ապրանքներին ձեռ է տալիս, բայց միայն դրանով չէ:

- Բայց այնպես չէ, որ Եվրոպայում մեզ գրկաբաց սպասում են, եվրոպական շուկան նվաճելու համար պետք է հիմքից փոփոխություններ արվեն, պետությունն ինչ է անում այդ ուղղությամբ...

- Վստահեցնում եմ՝ զուգահեռ ամեն ինչ արվում է: Այո, չեմ էլ ասում, որ Եվրոպան գորգը փռել է, դռները բացել ու մեզ է սպասում, բայց շուկայի դիվերսիֆիկացման գործընթաց է, եւ դիտարկվում են բոլոր շուկաները:

- Չե՞ք կարծում, որ Եվրոպային մենք քաղաքական կոմպոնենտով ենք հետաքրքիր, իրենց նպատակն այստեղ ռուսական ազդեցության թուլացումն է, պահանջում են ռուսական ռազմաբազայի դուրսբերում եւ այլն:

- Երբեւիցե ՀՀ պետական պաշտոնյայի շուրթերից լսե՞լ եք՝ ռուսական ռազմաբազայի հարց ենք քննարկում, դրսից Պետրոսն ասաց, Պողոսն ասաց, եկեք խնայենք մեր ժամանակը:

- Վստա՞հ եք, որ նման օր չի գա:

- Օրը կգա, բարին՝ հետը, մենք գիտե՞նք՝ վաղը մեզ հետ ինչ է լինելու, նստենք թախտին, ինչ-որ բաներ քննարկենք՝ անլուրջ է:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ՈՉՆՉԻՑ ԱՅԴՔԱՆ ՉԵՆ ՎԱԽԵՆՈՒՄ, ՈՐՔԱՆ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ

«Հրապարակի» զրուցակիցը ՀԱԿ փոխնախագահ **Լեւոն Զուրաբյանն** է:

- Պարոն Զուրաբյան, ինչո՞ւ են ՔՊ-ականներն այդքան շատ թիրախավորում Ձեզ: Նախ հեգնում են, որ ընտրություններում ՀԱԿ-ն ընդամենը 3 հազարից ավելի ձայն է հավաքել, բավականին շատ են անդրադառնում նաեւ անձամբ Ձեզ: Տպավորություն է, թե իշխանությունները Ձեր խոսքը ծանր են տանում եւ, առհասարակ, հանրությունները Ձեր խոսքը ծանր են տանում եւ, առհասարակ, ՀԱԿ-ականների ցանկացած քննադատություն են բավականին ծանր տանում: Ինչո՞ւ:

- Այդ ամենի եզրակացությունները թողնում եմ Ձեզ: Նշանակում է, որ իրենք էլ են հասկանում, որ ՀԱԿ-ին ուղղված իրենց հայտարարություններն իրականության հետ ոչ մի կապ չունեն: Իրենք մեզնից լավ են տիրապետում հանրության տրամադրություններին: Նրանք շատ լավ են հասկանում, թե մեր իրական աջակցությունը հանրային դաշտում ինչպիսին է: Մեզնից վախենում են, քանի որ մենք ճշմարտությունն ենք ասում, իսկ ՔՊ-ականները ոչնչից այդքան շատ չեն վախենում, որքան՝ ճշմարտությունից: Նրանք սերիական ստախոսներ են, իսկ սերիական ստախոսներն ամենաշատը ճշմարտությունից են վախենում:

- Փաշինյանի աշխատակազմի ղեկավարը երեկ Ձեզ էր անդրադարձել՝ նշելով, որ եթե մինչեւ հիմա Երեւանում փողոց կա՝ Արսեն Ամիրյանի անունով, դա նույնն է, թե տարիներ անց Լեւոն Զուրաբյանի անունով փողոց լինի: Ինչո՞ւ են այսպիսի էժանագին գրառումներ անում:

- Ես այդ գրառմանն իմ էջում արձագանքեցի: Մի բան ակնհայտ է՝ նրանք սեւեռված են Պապ թագավորի վրա: Արսեն Ամիրյանի անվան փողոցը կարելի է անվանափոխել, ես դրան դեմ չեմ, բայց եթե թագավորներից մեկի անունով են պարտադիր ուզում անվանել այդ փողոցը, ապա մենք այնքան ավելի կարեւոր եւ մեծ գործեր արած թագավորներ ենք ունեցել մեր պատմության ընթացքում, բայց նրանք այդ թագավորների անուններով Երեւանի փողոցները չեն անվանակոչում: Ռեժիմն ուզում է Պապ թագավորի հետ իդենտիֆիկացվել: Ինչու, որովհետեւ Պապ թագավորը կոնֆլիկտի մեջ էր Եկեղեցու հետ: Այս ամենն իրենց փոքր ուղեղն ու անգրագիտությունն է ցույց տալիս: Պապ թագավորի կերպարը մեծացնելն առնվազն անգրագիտություն է: Նիկոլ Փաշինյանը դժվար թե Պապ թագավորի գործունեությանն այլ եղանակով ծանոթ լինի, Զորյանի գրքից բացի: Հայոց պատմությունը շատ հռչակավոր թագավորներ է ունեցել, բայց նրանց մասին, հավանաբար, ռեժիմը տեղյակ չէ, նրանց ծանոթ չէ ուղղակի:

- Օրինակ՝ ո՞ր թագավորների անունով կարելի է փողոցներ անվանակոչել:

- Արտավազդ, Արտաշես, Աշոտ Երկաթ, ու էլի շատերը կան, որ հարյուր անգամ ավելի կարեւոր դերակատարում են ունեցել Հայոց պատմության մեջ, քան Պապ թագավորը: Ի դեպ, Պապ թագավորը, հակասական կերպար լինելուց բացի, ընդամենը չորս տարի է Հայաստանը ղեկավարել:

- Լենինգրադյան փողոցը եւս անվանափոխել են՝ Քըրք Քըրքորյանի անունով: Տպավորություն է, որ իշխանությունները ռուսական ուղղվածություն ունեցող գործիչների անունն են փորձում ջնջել:

- Նրանք, հավանաբար, տեղյակ չեն, որ Փարիզում կա Ստալինգրադի անվան մետրոպոլիտեն: Էժան փորձեր են անում, բայց Պապ թագավորին առաջին պլան բերելն արվում է՝ Հայ առաքելական եկեղեցու դեմ ամոթալի, շնաբերան արշավն արդարացնելու համար:

- Երբեմն ՀԱԿ-ի նախկին աջակիցները, ովքեր այսօր ՔՊ-ի աջակիցների շարքերում են, ՀԱԿ-ին մեղադրում են կուսակցության գաղափարներին դավաճանելու մեջ: Նրանք հաղթանակի ու պարտության, Արցախն Ադրբեջանին հանձնելու եւ Արցախը պահելու տարբերությունը չեն գիտակցում կարծես եւ ՀԱԿ-ին մեղադրում են Փաշինյանի «խաղաղասիրությանը» դեմ գնալու մեջ: Ինչո՞ւ:

- Տարբերությունը՝ նախքան պատերազմը եւ պատերազմից հետո, շատ պարզ է: Մենք ասում էինք, որ ղարաբաղյան պատերազմը հաղթական ավարտ է ունեցել, եւ ընդամենը այդ հաղթանակը պետք է ամրապնդել, զիջելով Ղարաբաղից դուրս հինգ շրջանները, ինչպես որ առաջարկում էր նաեւ Մինսկի խմբի համանախագահությունը: Նիկոլ Փաշինյանը վիժեցրեց այդ բանակցությունները, չնայած որ 2019 թվականին իր սեղանին դրված էր խաղաղության այդ նախագիծը, նա Հայաստանը ներքաշեց պատերազմի մեջ, ջարդուփշուրդ արեց եւ ոչնչացրեց Արցախը, իսկ հիմա խոսում է խաղաղության մասին՝ պնդելով, որ դա նույնն է, ինչ առաջարկում էր Տեր-Պետրոսյանը: Այժմ Փաշինյանն ու իր թիմն ասում են, որ մենք դավաճանել ենք մեր կուսակցության գաղափարին, սակայն մեր գաղափարը հաղթական գաղափարն էր, ինչը վիժեցրեց եւ թաղեց այս ռեժիմը: Այժմ փորձում են խաղաղության անվան տակ մտցնել այս զիջողականությունը եւ դա նույնացնել Լեւոն Տեր-Պետրոսյանի գաղափարների հետ: Փաշինյանն անդադար զիջում է եւ այդպես էլ խաղաղություն չի ստանում: Մեր եւ իրենց տարբերությունը շատ մեծ է:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ԻՆՉՈՒ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՄԻՐՅԱՆԸ ԴԱՐՁԱՎ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐ

Հունիսի 23-ի նիստում Երեւանի ավագանին որոշում ընդունեց մայրաքաղաքի Ամիրյան փողոցը վերանվանել Պապ թագավորի անվամբ: Հարցը նախկինում մի քանի անգամ քննարկվել էր, մերժվել, բայց այս անգամ ընդգրկվել էր չզեկուցվող հարցերի փաթեթում՝ հավանաբար, աղմուկից խուսափելու համար, ինչը չհաջողվեց: Բացասական մեկնաբանությունները շատ են: «Այ մարդ, գործով զբաղվեք, փողոցի անվանափոխությունով չեք բարելավի ժողովրդի վիճակը»: «Բայց, իմ կարծիքով, անունը պետք է նաեւ բարեհունչ լինի փողոցի համար: Պապ թագավորի փողոց՝ կարծես այնքան էլ փողոցին հարմար անուն չի»: «Կգա մի ժամանակ, երբ գալիք սերունդները, մոդային հետեւելով, կփոխեն (կվերընտրեն) նաեւ իրենց ծնողների (այդ թվում՝ նախնիների) անունները: Ի բացառություն մեր ազգին «շատ» նվիրված Հայաստանի, որոշ երկրներում դեռեւս պահպանվում են Շահումյանի, Սվերդլովի, Միկոյանի եւ այլնի անուններով փողոցներ: Արդյո՞ք բոլոր հայերը, այդ թվում՝ Երեւանի նախկին 26 կոմիսարների փողոցի բնակիչները, գիտեն ներկայիս Ագաթանգեղոսի մասին»:

Այսպիսի կարծիքներ էին հայտնում հասարակ երեւանցիները: Նրանք կարծում են, որ Նիկոլի սիրած գործիչների անունները դնելով փողոցների վրա՝ նա ուզում է ոչնչացնել ու մոռացության տալ քաղաքի պատմությունը: Օրինակ, 2021 թվականին հնդկահայ հասարակական-քաղաքական գործիչ, բուրժուալուսավորական գաղափարախոսության հիմնադիր, վաճառական Շահամիր Շահամիրյանի փողոցը Շենգավիթում անվանափոխվել է Հրանտ Վարդանյանի անվան: Արամի եւ Բուզանդի փողոցների մի հատվածը՝ Սարյան փողոցից դեպի Մաշտոցի պողոտա, ստացել է Կարեն Դեմիրճյանի անունը: Ամենաշատը տուժել են խորհրդային պատմության հետ կապ ունեցող անունները: Սովետական անվանումներն ամենաշատն են ջնջվում: Նիկոլ Փաշինյանի «Ելք» խմբակցությունը դեռ 2017 թվականին պաշտոնական նախագիծ էր ներկայացրել՝ Անաստաս Միկոյան փողոցն ամերիկահայ բարերար Քըրք Քըրքորյանի անունով վերանվանելու, բայց փոփոխությունը տեղի չունեցավ: Փոխարենը Քըրքորյանի անունով դրեցին Լենինգրադյանը, իսկ Միկոյանի փողոցի բախտը բերեց:

Ինչո՞ւ է Փաշինյանն այսքան կպած Պապ թագավորի կերպարին: Պապին նա հաճախ է հիշատակում ելույթներում եւ հարցազրույցներում, երբ խոսում է պետություն-եկեղեցի հարաբերությունների, ինքնիշխանության ամրապնդման, «իրական Հայաստանի» մասին: 19 թվականին սփյուռքյան մի հանդիպման ժամանակ ասել էր, որ հաճախ է մտածում Պապ թագավորի մասին, որի օրոք «մեր պատմության ընթացքը խաթարվեց»: Ըստ Փաշինյանի՝ Պապ թագավորը փորձում էր փոխել Հայաստանի եւ հայ ժողովրդի կարգավիճակը: 24 թվականին, բյուջեի քննարկումների ժամանակ, նա իրեն եւ իր կառավարությանը համեմատեց Պապ թագավորի հետ՝ հայտարարելով, որ երբ Պապ թագավորը եկավ իշխանության, «տեսավ, որ բյուջեն դատարկ է», իսկ եկեղեցին ու վանքերը տիրում են երկրի հողերին եւ ազատված են հարկերից: Ու դրանից հետո սկսեց պայքարը հայոց եկեղեցու դեմ: Ահա թե ինչու է Փաշինյանը սիրում Պապ թագավորին՝ նրա հակաեկեղեցական հայացքների համար, կարծում է պատմաբան եւ դասագրքերի հեղինակ **Աշոտ Ղուկասյանը**:

Ինչով է Պապ թագավորը, որը մեր պատմության հակասական կերպարներից է, կարճ թագավորած, ըստ որոշ տվյալների՝ արվամոլ, Եկեղեցու դեմ պայքարած գործիչ, արժանի, որ Երեւանի կենտրոնական փողոցներից մեկն անվանակոչեն նրա անունով՝ հարցրինք Ղուկասյանին: «Այո, կան հակասական կարծիքներ Պապ թագավորի մասին, բայց Փաշինյանն ընտրել է նրան՝ առանց հասկանալու, որովհետեւ նա պայքարել է Եկեղեցու դեմ, ու համարում է, որ ինքն էլ է նրա նման պայքարում Եկեղեցու դեմ՝ հանուն Հայաստանի Հանրապետության: Բայց Պապ թագավորին նրա հետ համեմատելն ամոթ է, սարերի ու ձորերի տարբերություն կա նրանց միջեւ, Պապ թագավորը դա անում էր ոչ թե Եկեղեցուն նսեմացնելու ու ջարդելու համար, այլ կենտրոնական իշխանությունն ամրապնդելու, ելնում էր Արշակունիների եւ մեր ժողովրդի շահերից: Նա ազգային մեծ գործիչ էր, հոգեւորական հեղինակների մի մասը նրա այդ քայլը չէր կարողանում գնահատել ու համարում էր Եկեղեցու դեմ ուղղված: Այդ հեղինակները՝ բոլորը եկեղեցական գործիչներ էին: Իսկ Փաշինյանը մեկ իրեն համեմատում է Քրիստոսի հետ, մեկ՝ Պապ թագավորի, բայց այդ համեմատություններն արժեք չունեն»:

Ինչո՞ւ են այսքան վերանվանումներ իրականացվում հիմա: «Ռեսուրսային կամ բյուջետային ընտրակաշառքով իշխանությունը պահած մարդիկ փորձում են ընտրակաշառքի մեղքը բարդել ժողովրդի վրա ու դրա հետ մեկտեղ էլ խաղալ ժողովրդի զգացմունքների հետ: Այդ զգացումներից մեկն էլ հենց անվանափոխությունների մեջ է»,- պատասխանում է պատմաբանը: Նա բարձր կարծիք ունի Պապ թագավորի մասին՝ որպես պատմական կերպարի: «Նա մեր ժողովրդի մեջ սիրված անձնավորություն է, որը հսկայական դեր ու ներդրում ունի: Բայց իշխանությունը, նրա կերպարն օգտագործելով, փորձում է նսեմացնել 10-20-ական թվականների հայ հեղափոխական գործիչների անունն ու կատարած գործը: Եվ դրանցից մեկն էր մեր հեղափոխության, մեր պատմության մեջ մեծ դեր խաղացած Արսեն Ամիրյանը: Նրան կպչելով՝ խաղում են մարդկանց զգացմունքների հետ, հակառակ դեպքում, նրանք այս քաղաքական ճգնաժամի պայմաններում այսպիսի հարց չէին բարձրացնի»:

Ամիրյան փողոցի անվանափոխման թեմայով ավագանու նիստում «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյանը հայտարարություն էր արել. «Չեմ ուզենա, որ հերթական անասնագողությունը նկատեմ այստեղ, ու դրա պատասխանն այսօր չեք ստանա, կստանաք մոտակա նիստերին: Կտեսնեք՝ անասնագողության արդյունքո՞ւմ եղավ, ինչ-որ գործարքի արդյունքո՞ւմ եղավ, թե՞ ոչ: Ամիսներով ՔՊ-ն դեմ էր եւ հանկարծ կողմ է չզեկուցվողով: Լուրջ եք ասում, ու այդտեղ ոչ մի առեւտուր չի՞ եղել»: **Մեսրոպ Մանուկյանին** խնդրեցինք պարզաբանել, թե ինչ նկատի ունի անասնագողություն ասելով: «Քաղաքական տերմինոլոգիայի իմաստով եմ ասում: Իմ կարծիքով, առեւտրի արդյունք էր դա: Այս նախագիծը բերել էր Հայկ Գրիգորյանը՝ ավագանիներից, որը հեռացել էր Հայկ Մարությանից: Սա մի քանի անգամ մերժվել էր: Իսկ այսօր այդ տղան բերեց՝ որպես չզեկուցվող հարց, ու իրենք անցկացրին: Վերջերս նկատում եմ նրա կողմից տարօրինակ պահվածք: Կարծում եմ՝ ՔՊ-ի հետ առեւտուր է տեղի ունեցել, որը կերեւա մոտակա ժամանակներս, նիստերի ժամանակ: Ես ներսից դա եմ տեսնում: Առեւտուրը հետեւյալն է՝ ՔՊ-ն ու «Հանրապետությունը» չունեն մեծամասնություն եւ պետք է ունենան լրացուցիչ մարդիկ՝ «Հանրային ձայնից», Մարությանից հեռացածների տեսքով»: Խոսքն «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ, մասնագիտությամբ փաստաբան Հայկ Գրիգորյանի մասին է:

Փողոցի անվանափոխությո՞ւնն է գինը: «Կապրիզ է, նա պարտադրեց, որ անցնի այս օրենքը»: Բա էդ տղան ինչո՞ւ է շահագրգռված, որ Ամիրյանը դառնա Պապ թագավոր: «Որ ինքը Երեւանում ֆռռա ու ասի՝ էս փողոցի անունը ես եմ դրել»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԿԱՏԱԿԵԼ Է ՈՒ ՄԱՌԱՅԱԿՑԻՆ ՍՊԱՆԵԼ

Մհեր Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի ժամկետային զինծառայող, 2021 թ. նոյեմբերի 12-26-ն ընկած ժամանակահատվածում որպես դիտորդ ընդգրկված լինելով մարտական հերթապահության, 2021 թ. նոյեմբերի 24-ին, ժամը 14:45-ի սահմաններում, շարքային Սուրեն Ավետիսյանի հետ կատակ անելու ընթացքում, անհարկի ինքնաձիգը լիցքավորել եւ փողն ուղղել է վերջինիս ուղղությամբ, որից հետո Ս. Ավետիսյանն իրեն ուղղված ինքնաձիգի վրայից հանել է պահեստատուփը եւ կատարել լիցքաթափման գործողություն, որի արդյունքում փամփշտակալից դուրս եկած փամփուշտը հետ է տեղադրել պահեստատուփի մեջ եւ նշված գործողությունը կատարել եւս երկու անգամ: Սակայն չորրորդ անգամ Ս. Ավետիսյանը հանել է պահեստատուփը, իսկ լիցքաթափման գործողություն չի կատարել: Մ. Սարգսյանն էլ զենքի փողն ուղղել է վերջինիս գլխի ուղղությամբ եւ մոռանալով, որ զենքը լիցքավորված է, քաշել է ձգանը, ինչի հետեւանքով արձակված մեկ կրակոցից Ս. Ավետիսյանին գլխի շրջանում անզգուշությամբ պատճառել է մահացու հրազենային վիրավորում, եւ վերջինս հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է: Մհեր Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 3-րդ մասով (Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ մահ):

Քրեական գործով մեղադրանքը պաշտպանել է Լոռու կայազորի զինվորական դատախազությունը: Մ. Սարգսյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Նա առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել եւ դատարանում հրաժարվել է ցուցմունք տալ՝ պնդել է նախաքննության ընթացքում պաշտպանի մասնակցությամբ տված ցուցմունքները: 2026թ. փետրվարի 16-ին Իջեւանում կայացած դռնբաց դատական նիստում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սասուն Մխիթարյանը վճռել է Մհեր Ռոբերտի Սարգսյանին մեղավոր ճանաչել Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով եւ նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Մհեր Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված բացակայելու արգելքը թողնել անփոփոխ՝ մինչեւ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը, որից հետո վերացնել: Տուժողի ներկայացրած գույքային հայցն էլ բավարարել մասնակի եւ մեղադրյալից հօգուտ տուժողի բռնագանձել 2 միլիոն դրամ: Որպես վարույթային ծախսեր, մեղադրյալ Մհեր Սարգսյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 210 հազար ՀՀ դրամ գումար՝ որպես փորձաքննությունների համար ծախսված գումար: Տուժողի ներկայացուցիչը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով ամբողջությամբ բեկանել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռը՝ վարույթը վերադարձնելով առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ դատարանում դատական հաջորդ նիստը նշանակված է հունիսի 30-ին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԻՏՔԵՐ

ԵՎՐՈՊԱՆ ԵԹԵ ՈՒԺ ՈՒՆԵՆԱՐ, ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՎԱՂՈՒՑ ԲԱՑՎԱԾ ԿԼԻՆԵՐ

Մինչ Հայաստանի տասնյակ հազարավոր ֆերմերներ միլիարդավոր դրամների վնասներ են կրում, ապրանքը վաճառում են ինքնարժեքից ցածր գնով, ինչը նշանակում է, որ կորչում են վերարտադրության իմաստը եւ մոտիվացիան, եվրաչինովնիկները Հայաստանին օգնություն եւ նոր շուկաներ են խոստանում: Ցավոք, մենք դեռ շատ առիթ կունենանք հիշելու ռուսական «խոստանալ՝ չի նշանակում ամուսնանալ» հայտնի ասացվածքը: Փաշինյանի մոտ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար աշխատող Դավիթ Խուդաթյանը հորթային հրճվանքով ԵՄ ընդլայնման հարցերի հանձնակատար Մարթա Կոսին է նվիրում մի քանի հատ ծիրան, իսկ վերջինս էլ ավետում է, որ խորհրդանշական քանակի հայկական ծիրանը հասավ Եվրոպա՝ Հայաստանին եւ հայ արտադրողներին խոստանալով նոր շուկաներ: Սա նույնիսկ անեստեզիա էլ չէ, ժամանակավոր ցավազրկում՝ բուժման նպատակով, սա ավելի շուտ էվթանազիա է, երբ հատուկ միջոցով մահը դարձնում են անցավ, աննկատ: Ահա թե հիմա ինչ է անում ԵՄ-ն Հայաստանի նկատմամբ: Չնայած էվթանազիան մահվան կամավոր համաձայնության դեպքում է, սա ավելի շուտ սպանություն է, քանի որ կատարվում է խաբեության եւ բռնության միջոցով, հայ հասարակության ակտիվ դիմադրությունը կոտրելու ճանապարհով:

Իսկ իրական կյանքը բոլորովին այլ է. ծիրան կամ կեռաս արտահանող հայ տնտեսվարողները գնում են այլ պետությունների տարբերանշաններով արկղեր, որ հայկական միրգը Ռուսաստան արտահանեն դրա անվան տակ, այնպես, ինչպես մի ժամանակ թուրքական եւ իրանական գյուղմթերքն էին լցնում հայկական արկղերի մեջ ու Ռուսաստան արտահանում հայկականի անվան տակ, եւ Ռուսաստանն էլ աչք էր փակում այդ մանիպուլյացիաների վրա: Ռուսաստանը կարող է հիմա էլ աչք փակել, որ մի քանի բեռնատար՝ հայկական մրգով բարձված, մտնի ռուսական շուկա, բայց դա Հայաստանի խնդիրը չի լուծի, որովհետեւ ապրանքի հսկայական մասը մնալու է երկրում՝ չի իրացվելու: Բացի դրանից, զարտուղի ճանապարհներով ու մանիպուլյացիաներով հայկական մթերքը Ռուսաստան հասցնելը բարձրացնում է գինը, թանկացնում հայկական ապրանքը, ինչը նվազեցնում է մրցունակությունը: Իսկ ռուսական շուկայում Հայաստանը շատ ուժեղ մրցակիցներ ունի, միայն Ուզբեկստանն այս տարի կրկնապատկել է գյուղմթերքի արտահանումը Ռուսաստան: Այդ երկիրը, որ ոչ ՀԱՊԿ եւ ոչ էլ ԵԱՏՄ անդամ է, իր իշխանությունների շրջահայացության շնորհիվ կարողանում է հսկայական շուկա ապահովել իր գյուղացիների եւ ֆերմերների համար: Ադրբեջանն է նաեւ օգտվում հայ-ռուսական հակասություններից, եւ ադրբեջանական գյուղմթերքը ողողել է ռուսական շուկաները:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն Իրանի հետ գործարք կնքելուց հետո հայտարարում է, որ իրանական սառեցված ակտիվներից ապասառեցվելու է 12 միլիարդը, բայց այդ գումարն օգտագործվելու է բացառապես ամերիկյան ֆերմերների արտադրանքը գնելու համար: Իրանն ԱՄՆ-ից ցորեն, եգիպտացորեն եւ սոյա է գնելու, որը կարող էր ավելի հարմար գնով եւ պայմաններով գնել Ռուսաստանից կամ Ուկրաինայից, կամ որեւէ այլ երկրից, բայց հիմա չի գնի, քանի որ ԱՄՆ-ն նման պայման է դրել՝ ձեր փողով միայն մերը կարող եք գնել: Թրամփը մտածում է իր ֆերմերների մասին, մտածում է նրանց սպառման շուկա ապահովելու մասին, որովհետեւ ամերիկյան ֆերմերներն իրեն ձայն են տվել, ինքը՝ որպես պետության ղեկավար, իրեն պատասխանատու է համարում նրանց առաջ, իսկ խունտան զբաղված է շուկա փակելով, խունտայի առաջնորդն ասում է, որ մարդիկ պետք է նոր շուկա գտնեն, հարմարվեն նոր իրավիճակին: Այսինքն՝ ոչ թե իշխանությունը եւ դրա մի քանի ներկայացուցիչներն են սպասարկում երկրի շահերը, այլ հակառակը՝ մի ամբողջ երկիր սպասարկում է մի քանի հոգու, ստիպված է համակերպվել նրանց քմահաճույքների հետ:

Եվրոպան այնքան թույլ ու անկարող է, որ չի կարողանում ներազդել իր տնտեսական հիմնական գործընկեր Թուրքիայի վրա, ստիպել, որ այդ երկիրը բացի Հայաստանի հետ սահմանը: Մարթա Կոսը, Կայա Կալլասը, Ուրսուլա ֆոն դեր Լեյենը խոսում են Հայաստանին օգնելու եւ եվրոպական շուկան նրանց առաջ բացելու մասին, բայց չեն խոսում, թե հայկական ապրանքը ոնց պետք է հասնի այդ շուկա: Դրա լավագույն ձեւը կարող էր լինել Թուրքիայի տարածքն օգտագործելը, կարող էին, չէ՞, ասել, տեսեք՝ Ռուսաստանը փակում է իր սահմանը, իսկ Թուրքիան բացում է: Նույն Դավիթ Խուդաթյանը նույն Բրյուսելում Մարթա Կոսից հետո հանդիպում է Թուրքիայի տրանսպորտի եւ ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուի հետ եւ քննարկում. կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ՝ «տարածաշրջանային կապուղիների զարգացման հեռանկարները»: Ստացվում է՝ տարածաշրջանային կապուղիները գործում էին, հիմա էլ սա քննարկում է դրա զարգացման հեռանկարը: Մինդեռ չգործող բանը հնարավոր չէ զարգացնել:

Էրդողանն այս թեմայով չորս տարի ֆռռացրեց Փաշինյանին, Հաքան Ֆիդանը չորս տարի խաբեց Արարատ Միրզոյանին, Սերդար Քըլըչը չորս տարի մատների վրա խաղացնում է Ռուբեն Ռուբինյանին, հիմա թարմ ականջ են գտել, մի չորս տարի էլ Ուրալօղլուն Խուդաթյանին թող ման տա Արաքս գետի հովտում եւ Անիի ավերված կամրջի շուրջ: Եթե եվրոպացիք խաբում են՝ խոստանալով նոր շուկաներ եւ օգնություն, ինչո՞ւ թուրքերը չպետք է խաբեն՝ խոստանալով սահմանի բացում եւ հարաբերությունների կարգավորում: Խունտան էլ հայաստանյան հասարակությանն է խաբում: Ամեն ինչ արդար է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԱԿԱՈՒՏՈՊԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Մի ժամանակ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը մեղադրում էր ընդդիմադիրներին, որ նախկինում մարդ էին ծեծում «պայդեզդում»: Հիմա նիկոլականները գործընկեր են ծեծում հիմնարկներում՝ աշխատանքային ժամերին: Եվ եթե վարչապետի անձնիշխանությամբ Հայաստանը վերածվում է բռնապետության, ապա տեղական մակարդակում այն ձեռք է բերում խուլիգանապետության հատկանիշներ, էլ չասած՝ ոստիկանապետության վերածվելու մասին: Չնայած տեսականորեն չի կարող նույն իշխանությունը միաժամանակ լինել թե՛ բռնապետություն, թե՛ խուլիգանապետություն եւ թե՛ ոստիկանապետություն: Բայց քանի որ մենք գործ ունենք այսօրվա հայաստանյան աննորմալ իրականության հետ, ապա պետք է ընդունենք դա որպես բացառություն, որ հատուկ է միայն մեր պետությանը՝ ոչ ադեկվատ անձի վարչապետության պարագայում:

Որովհետեւ նորմալ պետությունը հիմնված է լինում հիշողության՝ ազգային ավանդույթների, պատմության ու խորհրդանշանային համակարգի վրա: Այսօր այդ ամենը չեղարկվում է: Դրանց փոխարեն գործող իշխանության կողմից երբեմնի «հպարտ» քաղաքացիներին հրամցվում է այդ ամենից «ազատագրված իրականը»: Փորձ է կատարվում մարդկանց ուղեղներում ամրագրել այն մտայնությունը, թե մարդու կյանքում գլխավորը լափելն է: Ինչը մարմնավորում է վերը նշված «իրականի» ճարտարապետը: Իսկ դա անելու համար կարիք չկա ունենալ ազգայինով հագեցված պետական խորհրդանշանային համակարգ՝ սիմվոլիկա: Հատկապես որ լափելը հոգեբանորեն ավելի լավ է ստացվում Մասիս սարին փոխարինած քառագագաթ Արագածի պատկերի ներքո: Իսկ եթե սիմվոլիկայի փոխարինումը հասցվի տրամաբանական ավարտի, ապա մեր երկիրն էլ «արեւմտյան ադրբեջանի» վերածված կլինի:

Խայտառակ պարտության խորհրդանիշ անձի կողմից ձեւավորված վարչապետական կառավարման մոդելը կարող է հատկանշվել որպես եռաֆազ (բռնապետություն, ոստիկանապետություն, խուլիգանապետություն) մեկ ամբողջություն, ապա ինչո՞ւ չի կարելի այն ներկայացնել դրանցից մեկի տեսքով, ինչը բնորոշելը, ի դեպ, բարդ խնդիր չէ: Ընդամենը հարց ենք տալիս, թե որ ֆազն է իր մեջ ներառում մյուս երկուսը: Վերցնենք առաջինը՝ բռնապետությունը: Ճիշտ է, այն հիմնված է ոստիկանության վրա, սակայն չի կարող զուգահեռ թույլատրել խուլիգանապետության տարրեր, որովհետեւ կստացվի, որ բռնապետը միակ ղեկավարը չէ, դրանք բազմաթիվ են: Եթե հաշվի առնենք, որ խուլիգանապետության վերջնական կերպարը հանդես է գալիս որպես «օրենքով գողերի» ինստիտուտ, իսկ դրանք, նախ, բազմաթիվ էին ու մեկը մյուսին թշնամի: Երկրորդ. կարող էին ձեռք բարձրացնել «թագադրված» անձի վրա: Պետության բռնապետը նման բան թույլ տալ չէր կարող: Ի դեպ, հենց դրա օգտին է խոսում հանցագործության դեմ պայքարի՝ իտալական «դուչե» Մուսոլինիի եւ Իոսիֆ Ստալինի օրինակը:

Անցանք ոստիկանապետությանը: Որքան էլ այն ձեւախեղվի ու այլանդակվի, միեւնույն է, չի կարող չեղարկել իր հիմնական գործառույթը՝ պայքար հասարակական կարգի պահպանության համար, ինչն ինքնին նշանակում է պայքար ընդդեմ խուլիգանների եւ «օրենքով գողերի»: Ճիշտ է, կլինեն բազմաթիվ ոստիկանապետեր, որոնք կգնվեն վերջիններիս կողմից, սակայն ոստիկանապետության հիերարխիայի գագաթին գտնվողի համար «օրենքով գողերի» թագադրված անձը չի կարող համարվել հուսալի գործընկեր, ինչպես Եվրամիության ղեկավարության համար, օրինակ, Ադրբեջանի բռնապետն է: Իսկ եթե դրանց զուգահեռ գոյությունը նշանակում է շարունակական պատերազմ, ապա նման կառավարմամբ երկիրը երկար գոյություն ունենալ չի կարող: Ու հաստատ դա չէ ՀՀ վարչապետի աթոռը զբաղեցրած անձի երազանքը:

Մնաց խուլիգանապետությունը: Այս դեպքում գործ կունենանք թագադրված «օրենքով գողի» հետ, ում կծառայեն ոստիկանությունն ու մնացյալ իրավապահ համակարգը, հատկապես վերջինիս ուժային մասը՝ ազգային գվարդիան: Տեղերում կթույլատրվի տեղական մակարդակի «օրենքով գողերի» ինստիտուտը, ինչը կփոխարինի ոստիկանությանը, որը, ի դեպ, գոյություն ունի նաեւ այսօր: Որովհետեւ այն, ինչի համար ձերբակալվում են ընդդիմադիրները, բացարձակ չի վերաբերում իշխանության ներկայացուցիչներին: Ոստիկանապետության պայմաններում նման երեւույթ գոյություն ունենալ չի կարող:

Մնաց մեկ՝ ամենակարեւոր հարցը: Որպեսզի բռնապետության, ոստիկանապետության եւ խուլիգանապետության ամբողջությունն ընկալվի որպես միասնական խուլիգանապետություն, այն պետք է ղեկավարվի «օրենքով գողերի» ինստիտուտի ու դրա ղեկավարի՝ թագադրված անձի կողմից: Սակայն խնդիրն այն է, որ, ինչպես այլ հետխորհրդային հանրապետություններում, Հայաստանում եւս «օրենքով գողերի» ինստիտուտը Քրեական օրենսգրքով սահմանված է որպես օրենքից դուրս երեւույթ: Բայց կա նաեւ այդ հարցի լուծման տարբերակը. եթե ՀՀ-ում հնարավոր է սահմանադրական դրույթները խախտելով Սահմանադրություն փոխել, ապա ինչո՞ւ չի կարելի «օրենքով գողերի» ղեկավարին ներկայացնել որպես ազգի «փրկչի» ու հռչակել անփոփոխ վարչապետ, հատկապես որ ԵՄ-ն, միեւնույն է, դա եւս կընդունի սիրով, միայն թե վստահ լինի, որ այդ «փրկիչն» ամեն ինչ անելու է Ռուսաստանի ղեկավարության հետ թշնամանալու համար, ինչը որ տեղի է ունենում մեր օրերում:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐ Է ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ, ԻՍԿ ՋԵՐՄՈՑԱՏԵՐԵՐԸ ԼԱՑ ԵՆ ԼԻՆՈՒՄ

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Ինչ իշխանությունն արտահանման թվեր է հրապարակում, թմբկահարում նոր շուկաներ գտնելուն ուղղված հերոսական աշխատանքները, ջերմոցատերերն այլ բան են փաստում: Իշխանությունն ասում է, որ մայիսին Հայաստանից Վրաստան միայն ծաղիկների արտահանումը նախորդ տարվա մայիսի համեմատ

Էջը՝
Նելլի
ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

աճել է երեք անգամ՝ հասնելով 218 տոննայի, իսկ այս տարվա ապրիլի համեմատ աճը գրեթե կրկնակի է: Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն էլ իր ֆեյսբուքյան էջում գրել է, որ հունիսի 19-21-ը արտահանվել է. ծիրան՝ 371 տոննա, կեռաս՝ 154, ելակ՝ 19, պղպեղ՝ 144, լոլիկ՝ 76 տոննա, ծաղիկ՝ 390 հազար հատ եւ 7 տոննա: Իսկ թե որ երկիր է արտահանվել՝ նախարարը չի մանրամասնել:

Մենք զրուցել ենք մի քանի ջերմոցատերերի հետ՝ հասկանալու, թե արդյո՞ք արտահանում են իրենց արտադրանքը, եթե արտահանում են, ապա որ երկրներ եւ ինչպես: Գագարինում «Գեւմիկ» ընկերության հիմնած ջերմոցային տնտեսությունը 2022 թվականին, կառավարության աջակցությամբ, ներդրումային ծրագիր է իրականացրել, իսկ այժմ հայտնվել է անելանելի վիճակում: Ընկերությունից հրաժարվեցին պատասխանել, թե վերջին 2 ամիսներին ինչքան վարդ են արտահանել: «Գեւմիկ» ՍՊԸ-ի տնօրեն **Հրայր Աթանեսյանը** հրաժարվեց խոսել: Պատճառ կամ չասելու, թե որքան եք արտահանել: «Սաղ պատճառ ա»: Փորձել եք գոնե Վրաստան արտահանել: «Տարել ենք Վրաստան, չի վաճառվել, սաղ թափել ենք, վայ, էլ հարց մի տվեք ինձ»: Մենք այլ աղբյուրից տեղեկացանք, որ ընկերությունն աշխատակիցների աշխատավարձերը 40 տոկոսով կրճատել է եւ այդ կրճատումը հիմնավորել է նրանով, որ դա ժամանակավոր է՝ մինչեւ արտահանում լինելը, հակառակ դեպքում՝ ջերմատունը կփակվի:

Լճաշենում գործող խոշոր գյուղատնտեսական եւ ջերմոցային «Գրին Սոլուշնս» ընկերությունը 2022 թվականին է ներդրումային ծրագիր իրականացրել եւ աշխատատեղեր ստեղծել: Ծրագրով նախատեսվում էր կառուցել 45 հա ընդհանուր տարածքով ջերմոցային խոշոր համալիր եւ 2,7 հա մակերեսով արդյունաբերական տնկարան: Ընկերությունն այս պահին միայն լոլիկ է արտադրում: Այս տեղից նույնպես մեզ ինֆորմացիա չտվեցին: Դիտարկմանը, թե էկոնոմիկայի նախարարը գրում է, որ վերջին 3 օրվա ընթացքում արտահանվում են տարբեր տեսակի մրգեր եւ բանջարեղեն, դուք լոլիկ արտահանո՞ւմ եք, թե՞ ներքին շուկայում եք վաճառում, ընկերությունից պատասխանեցին. «Էկոնոմիկայի նախարարը գրում է, որ այսքան միրգ ու ծաղիկներ է արտահանել: Թող իրենք պաշտոնական տվյալներ տան: Էկոնոմիկայի նախարարը լավ գիտի՝ ինչ ա արտահանվում երկրից, քան՝ ես: Մենք էլ ենք ուղիներ փնտրում՝ արտահանելու: Մենք տեղական շուկայում միշտ մեր ապրանքը վաճառել ենք: Թող էկոնոմիկայի նախարարը տվյալներ տա՝ ուր են արտահանում, ինչ են արտահանում, ես ասում եմ Ձեզ՝ բոլորի մոտ նույնն է, լավ վիճակ չի»:

«Պիոն» ՍՊԸ-ջերմատան հոլանդական վարդերը վաճառվում են Հայաստանում եւ Վրաստանում՝ ինքնարժեքից ցածր գնով, իսկ ընկերության հիմնադիր Ֆաբրիս Արման Փինարբասի Հակոբն օրեր առաջ մեզ հետ զրույցում նշել էր, որ փորձում են ուղիներ գտնել, ծաղիկներն արտահանել այլ երկրներ: Նախօրեին կրկին զրուցեցինք **Ֆաբրիս Արման Փինարբասի Հակոբի** հետ: Հաջողվե՞ց արդյոք ծաղիկներն այլ երկիր արտահանել: Մեր հարցին ի պատասխան՝ նա ասաց. «Պետք է ուղարկեինք Բուլղարիա, ոնց որ հետաձգվեց, տեսնենք՝ գուցե վաղը կլինի: Ռումինիայից, Ֆրանսիայից զանգել, հետաքրքրվել են: Սպասում ենք: Ֆրանսիայի հետ էլ ես եմ անմիջապես կապ հաստատել, քանի որ ես այնտեղից եմ, խոսել եմ, խոստացան ինչ-որ բան անել»: Իսկ Բուլղարիա ինչպե՞ս եք արտահանելու: «Վրաստանից դեպի Թուրքիա, Թուրքիայից՝ Բուլղարիա»: Այդ դեպքում ճանապարհը չի՞ երկարի, Ձեզ վրա այդ ամենը թանկ չի՞նստի: «Ավելի թանկ է, քան թե Ռուսաստանը, եթե ճանապարհ լիներ՝ միանգամից Թուրքիայով Բուլղարիա տանել, այդ դեպքում ճանապարհն ավելի կարճ կլիներ, եւ ծախսը՝ քիչ»:

Արտահանման մասին էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանի գրառումը զայրացրել ու զարմացրել է ֆեյսբուքյան օգտատերերին: Տիգրան Մուրադյանը, օրինակ, գրել է. «Չեմ հավատում, խաբում է: Ներկայացնելով՝ ցանկանում են տպավորություն ստեղծել, թե իբր ծաղիկ, ծիրան եւ այլ մրգեր են արտահանվում»: Հրայր Անտոնյանը գրել է. «Թվեր ա, գրեք, էլի, բայց ջերմոցատերերն ու գյուղացին նստած լացում են, ձեզ ի՞նչ կա, ժեխին խաբեք, մեկ ա՝ դրանից բան չի փոխվում»: Համլետ Մինասյանն արձագանքել է. «Դե գրի՝ համեմատելով, թե ինչքան է արտահանվել անցած տարիների այս ժամանակահատվածում: Բացի դրանից, հրապարակեք փաստաթուղթ: Ի՞նչ եք «մանկապարտեզ» խաղում, ժողովրդին հերթական անգամ խաբում: Դուք ձեզնից ո՞նց չեք զզվում»:

ՊԱՅՄԱՆ ՉԵՆ ՍՏԵՂԾՈՒՄ, ԲԱՅՑ ԱԿՏԻՎՈՐԵՆ ՏՈՒԳԱՆՈՒՄ ԵՆ

2020 թվականից մսի վաճառքով զբաղվողների համար պարտադիր սպանդանոցային մորթ իրականացնելու պահանջ էր սահմանվել, արգելվել էր անասուններին բակերում մորթելը: Այս որոշումն անասնապահների եւ մսավաճառների դժգոհությունը հարուցեց, նրանք մատնանշում էին, որ կենդանիներ տեղափոխելը բարդ է, սպանդանոցները քիչ են: Կառավարությունը, ստիպված, հետաձգեց այս օրենքի գործողությունը եւ այս ուղղությամբ սուբսիդավորվող վարկերի եւ լիզինգային ծրագրեր նախաձեռնեց, որ սպանդանոցների կառուցման եւ անհրաժեշտ տեխնիկայի, այդ թվում՝ տրանսպորտային տեխնիկայի ձեռքբերման համար պայմաններ ստեղծվեն:

Շիրակի մարզի սպանդանոցների խնդիրը բազմիցս բարձրացրել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր **Միեր Մելքոնյանը**, սակայն մարզում դեռ սպանդանոցների խնդիրը լուծված չէ. «Շիրակի մարզում սպանդանոցների բացակայության խնդրի մասին ես բարձրաձայնել եմ բազմիցս՝ թե՛ խորհրդարանում, թե՛ հրապարակային հարթակներում: Սա ոչ թե երկրորդական, այլ ռազմավարական նշանակություն ունեցող հարց է՝ ուղիղ առնչվող ինչպես մեր գյուղատնտեսության զարգացմանը, այնպես էլ հանրային առողջությանն ու տնտեսվարողների գործունեության օրինական դաշտին: Ցավոք սրտի, պետք է արձանագրեմ, որ 2025 թվականի ընթացքում այս խնդիրը որեւէ լուծում չստացավ: Անգործությունն ու հապաղումը բերեցին այնպիսի իրավիճակի, երբ տուժեցին թե՛ մսավաճառները, թե՛ ֆերմերները: Մարդիկ հայտնվեցին փակուղում. մի կողմից՝ օրենքի պահանջները, մյուս կողմից՝ դրանց ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը: Ավելին ասեմ. միայն 2025 թ. ընթացքում ՍԱՏՄ-ի կողմից Շիրակի մարզում ոչ սպանդանոցային ծագման մթերք եւ հումք վաճառելու համար պատասխանատվության են ենթարկվել 2 տնտեսվարող եւ 14 ֆիզիկական անձ: Նշված խախտումների համար տուգանքների ընդհանուր չափը կազմել է 2 միլիոն 700 հազար դրամ: Սա համակարգային անհավասարակշռություն է, երբ պետությունը չի ստեղծում պայմաններ, բայց պատժում է այդ պայմանների բացակայության հետեւանքով առաջացած իրավիճակի համար: Սպանդանոցների բացակայությունն այլեւս չի կարող դիտարկվել որպես տեխնիկական խնդիր: Սա արդեն դարձել է սոցիալ-տնտեսական լուրջ սպառնալիք, որը խաթարում է մարզի գյուղատնտեսության զարգացումը, սահմանափակում մարդկանց եկամուտները եւ վտանգում սննդային անվտանգության նվազագույն չափանիշները: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է հստակ պետական ռազմավարություն՝ ոչ թե ձեւական փաստաթղթի, այլ իրական գործողությունների ճանապարհային քարտեզի տեսքով, որը կներառի կոնկրետ ժամկետներ, պատասխանատու մարմիններ եւ վերահսկելի արդյունքներ: Առանց այդպիսի ռազմավարության մենք շարունակելու ենք պտտվել նույն փակ շրջանի մեջ՝ խախտումներ, տուգանքներ եւ սոցիալ-տնտեսական խորացող խնդիրներ: Ռազմավարությունը պետք է հիմնված լինի մարզի իրական պահանջների վրա, ապահովի ենթակառուցվածքների ստեղծումը եւ հնարավորություն տա ֆերմերներին ու տնտեսվարողներին՝ գործել օրինական եւ կանխատեսելի դաշտում: Պետությունը պարտավոր է հստակեցնել ոչ միայն «ինչ անելը», այլ նաեւ՝ «երբ անելը», եւ «ով է պատասխանատու»: Հակառակ դեպքում ցանկացած հայտարարություն կմնա թղթի վրա, իսկ Շիրակի մարզի բնակիչը կշարունակի կրել այդ անորոշության ծանր հետեւանքները»:

Մինչեւ տարեվերջ Շիրակի մարզը կունենա ինչպես համայնքային, այնպես էլ մասնավոր սպանդանոցներ: Մարզում կառուցվում են սպանդանոցներ, նպատակն է՝ լուծել մորթի կազմակերպման խնդիրը, սննդամթերքի անվտանգության պահանջների լիարժեք պահպանումը՝ վստահեցրին մեզ Շիրակի մարզպետարանից. «Մարզում կառուցվում է 6 սպանդանոց, որից 3-ը՝ մասնավոր ընկերության կողմից, մյուս 3-ը կառուցվել են Աշոցք, Ախուրյան եւ Արթիկ համայնքներում: Այս պահին չեն գործում, գտնվում են սարքավորումների մատակարարման փուլում»:

ՈՒՏՈՂ, ԶՈՒԳԱՐԱՆ ԳՆԱՑՈՂ ՄԻ ԲԻՈԶԱՆԳՎԱԾ ԵՆ ՈՒԶՈՒՄ ՍՏԱՆԱԼ ՄԵԶՆԻՑ

*Հարցազրույց բանաստեղծ **Գագիկ Սարոյանի** հետ*

- Դուք մեր այն մտավորականներից եք, որը եւ զենքով, եւ գրչով է պայքարել: Ի՞նչ կասեք մեր մտավորականների մասին:

- Նախ՝ այնքան է խառնվել այդ՝ «մտավորական» հասկացությունը, որ, օրինակ, ես 50 տարի է՝ բանաստեղծություն եմ գրում, այդպես էլ գլխի չընկա, թե հայ մտավորականն ով է: Դեռ էն սովետի տարիներից սկսած՝ պետական պարգեւներ էին վերցնում, եւ նման բաներ: Բայց մի տեսակ կար, որն անվերջ պալատական էր, ով էլ լիներ իշխանության գլուխ, այդ շերտն իրեն բարձր մտավորական էր համարում՝ «պադավատ» մեքենաներով, պետական մրցանակներով, եւ կար այն մերժված հատվածը, որն էլի իրեն մտավորական էր համարում՝ իր բոհեմիկ վիճակներում էն տղերքը: Հիմա դրանցից ո՞րն էր մտավորական: Ուղղակի ոսկե միջինի խնդիր կա, որն այդպես էլ մեր մշակույթը չկարողացավ ձեւակերպել իր համար, թե մտավորականն ով է: Այդ ոսկե միջինը չկա: Պրոֆեսիոնալ բանաստեղծ մտավորականը ո՞րն է, արդյո՞ք այն մարդն է, որը պետք է օրական 4-5 ժամ բանվորի պես նստի իր գրասեղանի առաջ ու գրի:

- Մտավորականը պետք է միայն ստեղծագործի՞, երբ պետությունը դժվար վիճակում է, չպե՞տք է խոսի, պայքարի:

- Հենց մտավորականները՝ մենք ենք պարտավոր խոսել: Մեր հայրենիքը հիմա այն վիճակի մեջ է, երբ քեզ հրել նետել են անդունդի մեջ, եւ դանդաղ, կադր առ կադր իջեցնում ես, որպեսզի այդ ընկնելու պահին՝ այդ դանդաղեցված կադրի մեջ էլ վախից սիրտդ պայթի: Կտրուկ չես ընկնում, որ մեռնես՝ թեկուզ ջախջախվելով ներքեւում եղած սալերին: Ամեն կադրի մեջ, ամեն վայրկյան մենք սրտապատառ ենք լինում: Հիմա մեր սրտերը կանգնած են, մենք չենք հասցնում շնչել, որովհետեւ օր-օրի բան է փոխվում այս երկրում՝ դեպի ավելի վատը, ավելի սարսափելին: Եվ մենք անդունդի հատակը չենք հասել դեռ, չգիտեմ՝ ինչ հրաշք պետք է լինի, որ կանգ առնենք, երեւի Աստված կա, ինչ-որ ուժեր կան, որ փորձում են դեռ պահել մեզ:

- Այս տարիների ընթացքում իրեն ինչպե՞ս պահեց մեր մտավորականությունը, ինչպե՞ս կբնորոշեք այդ կեցվածքը:

- Շատ վատ պահեց: Օրինակ բերեմ գրողներին, որ ավելի լավ գիտեմ. գրական դաշտը բաժանված է արտադրամասերի, ցեխերի, ամեն մեկն իր տաղանդավոր կամ անտաղադ պոետին կամ արձակագրին վերցնում՝ դրան է տպագրում, դրան է առաջ հրում, հետո էլ էն մյուս փոքր խմբակն է իր հերոսին առաջ մղում: Շատ վատ է բաժանված այդ դաշտը: Ասենք՝ մի խմբակ էլ կա, որ ազգայնական է, ես ինձ համարում եմ դրանց մեջ, եթե դա խմբակ է: Բոլորը բոլորի դեմ պայքարում են, ոչ մեկը մեկին չի սիրում, չի ընդունում, չի հարգում:

- Ինչի՞ հետեւանք է, որ ժողովրդի մի ստվար զանգված չի գիտակցում, երբ երկիր է կորցնում, պետությունն ու պետականությունն են օր-օրի խարխլվում, եւ գնում՝ քվե է տալիս այդ աղետը բերողներին:

- Սա կենսաբանական խնդիր է: Գիտնականներն ասում են, որ ուղեղն իր բնույթով ծույլ է, հաճույքի հետեւից վազող է, այդ պահին հացը լինի, սուրճը, օղին, ինքը դրանով բավարարվում է: Ուղեղը սիրում է բազմոցին պառկել եւ իրենից հեռացնել վտանգները: Այո, կան ուժեր, որ մղում են մտավորականին ետ՝ առաջին ձայնը լինելու իրավունքը խլելով նրանից: Բայց մտավորականն ինքնին ծույլ է, ինքն էլ է մտածում իր հացի, իր հաճույքների մասին կամ ասում է՝ այսօր չմտածեմ, կարող է վաղն անցնի, քամի է, քշեց՝ կանցնի: Բայց... չէ, գնալով էդ քամին ուժգնանում է, փոթորիկ է, մենք արդեն հողմապտույտի մեջ ենք, մենք ներսից փլուզվում ենք, քայքայվում ենք, ծակոտկեն են մեր սրտերը, հոգիները: Չգիտեմ, շատ վատ է, ամեն ինչ կապել մտավորականության հետ, դա էլ ճիշտ չէ:

- Մենք գրեթե միշտ, հաճախ միասին՝ եղել ենք ընդդիմության հանրահավաքներին, պայքարել ենք, մեր խոսքն ենք փորձել տեղ հասցնել, բայց ունեցանք ընտրությունների այս արդյունքը, ինչպե՞ս կգնահատեք այն:

- Նախ ասենք, որ խայտառակ ընտրություններ էին: Ես գիտեի, որ ՔՊ-ն տանելու է իր 30, առավելագույնը՝ 35 տոկոսը, էդ 10-15 տոկոսը որտեղի՞ց ավելացավ, չգիտեմ: Կարծում եմ, որ էդտեղ ինչ-որ կեղծիքներ, մախինացիաներ են եղել, ուղղակի չեմ կարող ասել, փաստեր չունեմ: Վարչական ռեսուրսը, բանակը, ուժային բոլոր կառույցներն օգտագործել են, արդարացի չէ, բայց հասկանալի է: Այդուհանդերձ, արդյո՞ք մեր ազգը՝ մոտ 50 տոկոս, լավ, ասենք՝ 25 տոկոսը, այլասերված է: Մենք իրավունք չունեինք, 5 հազար տարվա ընդգրկուն պատմություն ունենալով, այդքան այլասերվել: Երեւի աշխարհը կառավարող ուժեր կան, որոնք իրենց դավադրապաշտությունների տեսությամբ փորձում են մեր կիսափչացած ազգը լրիվ փչացնել: Ուտող, զուգարան գնացող մի բիոզանգված են ուզում ստանալ մեզնից: Ոչինչ չմտածել, այսօր այս սրճարանում նստած հրաշալի անցկացնենք, վաղն էլ՝ մյուս սրճարանում, մյուս օրն էլ՝ բանտում, գերության մեջ կամ չգիտեմ ուր:

- Հանուն արդարության ասենք, որ, այդքանով հանդերձ, իշխող ուժը չկարողացավ 50 տոկոս հավաքել: Իհարկե, ապշելու է, որ այսքան աղետ բերելուց հետո այս իշխանությունը կարող է 726 հազար ձայն ստանալ:

- Ինձ համար ոչ թե իր հավաքած այդ ենթադրյալ 49 տոկոսն է ամենավտանգավորը, այլ ընտրություններին չմասնակցած այն 40 տոկոսը: Ես չեմ կարող վերջնական կարծիք հայտնել, թե ինչու այդ մարդիկ չգնացին ընտրատեղամասեր, ինչն իրենց ետ պահեց, ինչու են այդքան անփույթ, այդքան չեզոք իրենց երկրի ճակատագրի նկատմամբ, այդպես համակերպված: Ես չգիտեմ, թե ոնց է դասավորվելու հետագա իրավիճակը, բայց մտավորականություն կոչված այդ խավի հիմնական աշխատանքը պետք է լինի այդ 40 տոկոսին ետ վերադարձնել դեպի դաշտ, գան մասնակցեն:

- ԲՀԿ-ին թույլ չտվեցին անցնել ԱԺ, որոշ տեղամասերում չեղարկեցին ընտրության արդյունքները եւ վերընտրություն չնշանակեցին՝ մարդկանց զրկելով ընտրելու իրավունքից, իսկ ընտրությունների գիշերը ԿԸՀ-ն 8 ժամ ընդհատակ էր անցել:

- Բացարձակ անհիրավություն: Երեւի իրենք մեխանիզմները գիտեն, ինստիտուտներ՝ նստած գծում են, թե ոնց կեղծեն: Նաեւ ընդդիմության հետընտրական քայլերը, ճիշտն ասած, չեմ հասկանում: Չէ՞ որ բոլոր ընտրատեղամասերում վստահված անձեր, դիտորդներ են եղել, արձանագրություններ կան, չե՞ն կարողանում այդ 2005 ընտրատեղամասերի արդյունքները դնեն ու հաշվեն, ինչո՞ւ են խուսափում: Ես իմ ձայնը տվել եմ ընդդիմությանը, սպասում եմ նրա հրամանին, ի՞նչ անենք, ինչպե՞ս տեր կանգնենք մեր ձայնին, չէ՞ որ ձայնը տվել ենք, ասենք՝ ի՞նչ անենք, հետո եկող մեր քայլը ո՞րն է լինելու: Շատ ավելի բարոյական կլինի, որ չվերցնեն այդ մանդատները, հատկապես որ ԲՀԿ-ին թույլ չտվեցին անցնել ԱԺ: Այսինքն՝ հիմնավորում կա, ընդդիմությունը բարոյական իրավունք ունի չվերցնելու այդ մանդատները, որովհետեւ, այս ամենով հանդերձ, արդեն լեգիտիմ չէ այս իշխանությունը: Իսկ ժողովրդի հետ ես կռիվ ունեմ անելու, բայց իմ կռիվը ոչ թե ՔՊ-ին ձայն տվողների հետ է, այլ այդ 40 տոկոս չմասնակցածների դեմ է: Ես գիտեմ, որ այդ 35 տոկոսն ախտահարված կերպարի մեջ է, ըստ էության, հավանաբար, բոլոր ազգերի մեջ էլ կան այդպիսիները, ազգերը երբեմն հիվանդանում են, բայց որպեսզի այդ ազգը չմեռնի, այդ 40 տոկոս չեզոք, լոյալ մասսային պետք է բերել եւ մասնակից դարձնել: Այդ տոկոսը հսկայական թիվ է եւ ավելի կարեւոր է, քան ընդդիմությունը, իշխանությունը:

- Իշխանությունը մնաց նույնը, այս ընթացքով ո՞ւր են տանում երկիրը, ի՞նչ է սպասվում մեզ:

- Եթե ՔՊ-ն մարսեց այդ ամեն ինչը, շատ ավելի ծանր իրավիճակում ենք հայտնվելու, շատ վտանգավոր զարգացումներ են սպասվում, շատ: Գլոբալ աշխարհն իր բոլոր մեխանիզմներով հարձակվել է այս փոքր ազգի վրա: Անգամ այդ «զանգեզուրյան միջանցք» կոչվածից, Սյունիքը փլուզելուց բացի մեր հոգեւոր աշխարհն են պղծում, Եկեղեցու դեմ են աշխատում, մշակույթի, ընտանիքի դեմ, այն կարեւոր 3 սյուների, որոնց վրա հենված է ազգը: Այսօր արդեն սկսել են հերոսների նկարները ջնջել պատերից:

- Մենք տեսանք, թե ինչ կատարվեց վերջին 5 տարում՝ Արցախի հայաթափում, Հայաստանի տարածքից ավելի քան 200 ք/կմ զավթել է թշնամին եւ ամեն օր հոխորտում է, որ վերադառնալու է «Արեւմտյան Ադրբեջան», այսինքն՝ Հայաստան, եւ դա արվում է պետական մակարդակով: Տեսնո՞ւմ եք այդ ամենն իրականություն դառնալու վտանգ:

- Դառը ճշմարտություններ եք ասում, եւ ցավն այն է, որ մեր մեջ չկա դրա դեմ այն կազմակերպող ուժը, դիմադրության շարժումը, որ պետք է լիներ: Մի պահ՝ Սրբազան շարժման ժամանակ, բոլորս հույսով լցվեցինք: Ի դեպ, այդ ՔՊ իշխանությունների ժամանակ միակ մաքուր, ամենամիակ շարժումը, որի հետ ես հույս էի կապում, Սրբազան շարժումն էր, ափսոս, որ ժողովուրդը չկանգնեց: Մնում է՝ ի՞նչ անել, չգիտեմ այդ հարցի պատասխանը: Ես իմ բաժինը պայքարելու եմ, գրիչով, զենքով, ընտանիքով, ընկերներով. այդքանը կարող եմ անել, ուրիշ ի՞նչ անեմ: Զայնս տալիս եմ, չեղյալ են հայտարարում, չի իրացվում իմ ձայնը: Ընդդիմության հանրահավաքներին էլ քայլում էինք, հետո ցրվում տներով, հաջորդ օրը՝ նույնը: 6-7 տարի շարունակ քայլելով՝ հարյուր զույգ կոշիկ մաշեցինք Երեւանի փողոցներում: Գուցե ընտրություններին չմասնակցածները հենց այդ շարժումներից հիասթափվածնե՞րն են նաեւ:

- Բանաստեղծը միշտ մի լուսավոր կետ տեսնում է, ինչպե՞ս կձեւակերպեք Ձեր բանաստեղծական խոսքն այս պահին:

- Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանի մեր բոլոր բարձունքները տրվել են Ադրբեջանին, մի հրաշք պիտի լինի, որ մենք կարողանանք դիմադրել: Բայց ամեն ինչ կորած չէ, իշխանափոխություն պետք է լինի, այլ ելք չկա, այլապես Աստծու ծրագիրը սխալ է: Մի ինչ-որ ուժ կլինի, ինչքա՞ն կարելի է թույնն ընդունել եւ չմեռնել, 8 տարի է՝ այդ թույնը խմում ենք եւ դեռ ողջ ենք, մեռած չենք: Իսկ այս իշխանություններն իրենց տերերի կողմից իրենց դեմ դրված ծրագիրը փորձելու են մինչեւ վերջ կատարել, հենց զգան, որ անհնար է, անմիջապես թռնելու են, մնալու են էն խաբված իշխանամետները, տխուր ընդդիմությունը եւ չկողմնորոշված էն 40 տոկոսը: Չգիտեմ, թե էլ ինչ է լինելու, հույսը քիչ է, բայց էն մանանեխի հատիկի չափ հույսը երեւի հնարավորության ինչ-որ դռներ կբացի: Սիրենք մեր հայրենիքը, անկախ իշխանավորներից, անկախ ընդդիմությունից, ով ուզում է լինի: Ավելի շատ սիրենք մեր հայրենիքը, քան քաղաքական ղեկավարներին, ընդդիմադիր ղեկավարներին, հոգեւոր եւ մտավորական ղեկավարներին: Հենց սիրենք մեր հայրենիքը, ամեն ինչ իր տեղը կընկնի: Մի քիչ դառն է ասելը, բայց այս անվերջ պարտությունների մեղավորը ոչ միայն Նիկոլն է՝ իր ուժով, այլ նաեւ ընդդիմությունն է:

Հուսիկ Արա

ԱՌԱՋՆՈՐԴՎԵՆՔ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՄԲ



Հովհաննես ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դարավի մարդու համար հեշտ չէ հյուսիսում ծառայելը: Երկարատեւ ձմեռ, ցուրտ, ձյուն, դահուկներ: Բայց ծառայելիս օրագրում մի գրառում էի արել: Ինձ համար անմոռաց:

- Արժեր ծառայել ցուրտ երկրում, բայց վայելել հյուսիսափայլի շքեղությունը:

Այո, քիչ է ասել, որ հյուսիսափայլի գույների խաղը շքեղ է: Տեսնել ու վայելել է պետք:

Ինձ համար միանգամայն ընկալելի եւ ըմբռնելի է ՖԲ-ում ծանոթ-անծանոթի հրապուրանքը վերջալույսի եւ արշալույսի տեսարաններով: Անկրկնելի ակնթարթներ, նաեւ որոնցով արդարացվում է մարդու՝ աշխարհ գալը եւ աշխարհից հեռանալու ցավը:

Մտորումները հանգիստ չեն տալիս, ուղեղդ հանգիստ չի տալիս, ու տառապում են սիրտդ, հոգիդ նաեւ այն մտքից, որ մեր հարեւան Իրանում հրթիռային հարվածի զոհ դարձավ 12-14 տարեկան հարյուր հիսունից ավելի աղջիկ…

Անմեղ զոհեր, որոնք երբեւէ այլեւս չեն հիանա վերջալույսի, արշալույսի աննկարագրելի խաղերով:

Ցավ է: Եվ այդ ցավի արտահայտությունն էր թերեւս, որ երազիս մեջ դարձել էի քանդակագործ եւ անմեղ պարմանուհիների հիշատակին կերտել էի կյանքի հարատեւության մոնումենտ՝ կենտրոնում աղջիկներ, որոնցից ասես թեւեր առած՝ երկինք էին ճախրում աղավնիներ…

Արթնացա: Երազ էր:

Արձանի փոխարեն աղջիկների չապրած կյանքի համար ափսոսանքն ու ցավն էին ու նրանց հիշատակի մշուշոտ մահարձանը…

Այսօր էլ հրթիռներն ու արկերը ակոսում են կապույտ երկինքը՝ ավերակելով քաղաքներ ու շեներ, մինչդեռ այդ ամենին աջակցող ժողովրդավարության բաստիոն հորջորջվող երկրի առաջնորդը ներկայացվում է (ոմանց կողմից), ոչ ավել, ոչ պակաս՝ Նոբելյան մրցանակի…

Էսպիսի բաներ…

ՀԳ. *Արշալույս, վերջալույս, հյուսիսափայլ: Հոգեկան վայելքներ են, զգացողություններ, որոնք մղում են մտածելու զսպվածության, չափավորության մասին:*

Հատկապես հետընտրական մեր թոհուբոհում (Երեւանի քաղաքապետարանում ծեծկռտուքը, ամենահավասարակշռված գործիչներից մեկի՝ Ավետիք Չալաբյանի կալանավորումը) ամեն ինչ իր արշինով չափելուց առաջ հարկ է մնալ խոհեմության շրջանակում եւ առաջնորդվել հայրենիքի, ժողովրդի հանդեպ բարի զգացմունքով: Առաջին հերթին՝ հայրենիք եւ ժողովուրդ՝ ճամարտակությունների փոխարեն… Որ հայ մարդը հաճելի եւ սուր զգացողությունների վայելքից անմասն չմնա…

Հակադրությունը դրական ուժ է, որը պահանջում է հրաժարում անհեթեթ քայլերից: Հակադրությունը հարթում է սուր անկյունները, ամոքում մեր կյանքը: Ասել է՝ հավատանք եւ ապավինենք աստվածային իմաստնությանը:

Բաքուն սպառնալիքից անցել է կոնկրետ «քայլերի»

«Արեւմտյան ադրբեջանցիների՝ իրենց պատմական հողեր վերադառնալու հարցն արդեն իսկ առաջ է մղվում իրավական հարթության մեջ եւ արտացոլվում է միջազգային ֆորումներում տարածված եւ ընդունված փաստաթղթերում»,- լրագրողների հետ հարցազրույցում հայտարարել է Միլի մեջլիսի պատգամավոր Ռիզվան Նաբիեւը՝ «Վերադարձ Արեւմտյան Ադրբեջան. պատմական արդարության եւ մարդու իրավունքների վերականգնում» միջոցառման ժամանակ: Նրա խոսքով՝ այսպես կոչված «արեւմտյան ադրբեջանցիների»՝ իրենց պատմական հողեր (նկատի ունի Հայաստանի տարածքը՝ խմբ.) վերադառնալու հարցը վաղուց քննարկվում է հիմնականում մարդասիրական տեսանկյունից. «Բազմաթիվ փաստաթղթեր արդեն ուղարկվել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին եւ Գլխավոր ասամբլեային, եւ համապատասխան փաստաթղթեր են ընդունվել նաեւ խորհրդարանական դիվանագիտության, Չմիավորման շարժման եւ այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում»: Հիշեցնենք, որ, ըստ ադրբեջանական ԱՊԱ-ի, հունիսի 24-ին, Վաշինգտոնում տեղի կունենա միջազգային համաժողով՝ նվիրված «Հայաստանի կողմից իրականացված ադրբեջանցիների էթնիկ զտմանը»: Աղբյուրի փոխանցմամբ՝ Կապիտոլիումում ծրագրված հավաքի կազմակերպիչը 2023-ին Ադրբեջանի կողմից ստեղծված Բաքվի նախաձեռնող խումբն է: Այսպես կոչված, «Արեւմտյան ադրբեջանցիների համայնքի նախագահ», Միլի մեջլիսի պատգամավոր Ազիզ Ալեքբերլին իր հերթին հայտարարել է. ««Արեւմտյան ադրբեջանցիների՝ իրենց հայրենի հողեր վերադարձի» հարցը պետք է դառնա Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղ գործընթացի շրջանակում քննարկումների մաս, քանի որ առանց այդ իրավունքի վերականգնման տարածաշրջանում ամուր եւ կայուն խաղաղության մասին խոսելը դժվար կլինի»:

Օրերս ադրբեջանցիների՝ ՀՀ-ում բնակվելու հարցին հերթական անգամ անդրադարձել էր նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ բաց տեքստով հայտարարելով, թե Բաքուն երբեք չի հրաժարվի այդ պահանջից: Այս ընթացքում ՀՀ գործող իշխանությունները շարունակում են անամոթաբար հերքել, թե այդպիսի հարց չկա երկկողմ բանակցությունների օրակարգում, ավելին՝ այդ մասին պնդումները վերագրում են հայաստանյան ընդդիմության երեւակայությանն ու մանիպուլյացիաներին: Իսկ իրականում՝ ժողովրդից թաքցնում են ճշմարտությունը եւ երկիրն ու ժողովրդին ներքաշում թուրք-ադրբեջանական արյունոտ մսաղացի մեջ:

Արա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 25.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԲԵԼԱՌՈՒՍԸ ԿՆԵՐԳՐԱՎՎԻ՞ ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ



Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եթե ներգրավվի, դա ինչ ազդեցություն կունենա ռուսական հասարակության վրա: Ռուսաստանում վերջին օրերին հանրային-քաղաքական դաշտում քննարկումների մի ստվար հատված վերաբերում է այս հարցին: Համաձայն ուսումնասիրությունների, եթե նույնիսկ նման բան լինի, ապա Ռուսաստանում հայրենասիրական ապրումների վերելք դժվար թե լինի: Ընդհակառակը. սոցուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ռուսական հասարակության մոտ խորքային առումով ձեւավորվել է ընկալում, որ հակամարտությունը դուրս է եկել վերահսկողությունից եւ աստիճանաբար ձեռք է բերում ձգձգվող մայրցամաքային պատերազմի բնույթ՝ անկանխատեսելի ելքով:

Աստիճանաբար սկսում են տրամադրություններ բյուրեղանալ, որ հակամարտությունը սկսում է նոր երանգ ընդունել, ու հաստատվում է այն տեսակետը, թե այն այլեւս ըստ պլանի չի ընթանում: Ռուսները սկսում են համոզվել, որ եթե Բելառուսն էլ ներգրավվի, ապա դա կարող է նշանակել Ռուսաստան-Արեւմուտք ուղիղ բախման սկիզբ, երբ պատերազմը ձեռք կբերի կոնտինենտալ բնույթ: Դա, ըստ Nezigar տելեգրամյան ալիքի վերլուծաբանների, հասարակ մարդկանց մոտ կբերի պատերազմական վախերի ուժգնացման, վախեր, որոնք կապված են նաեւ միջուկային զենքի հնարավոր կիրառման հետ: Այդ վախերը ռուսական հասարակությունում ներկայում բավականին զգալի են: Հասարակության մեջ ուրվագծվում է եւս մեկ բեւեռացում: Պատերազմի կողմնակիցներ, որոնք կողմ են, որ Բելառուսն էլ ներգրավվի պատերազմի մեջ, եւ խաղաղության կողմնակիցներ ու չեզոքներ, որոնք ներգրավումը դիտարկում են ոչ թե որպես ուժի դրսեւորում, այլ իրավիճակի ոչ նորմալության ցուցիչ: Եթե Բելառուսը ներգրավվի պատերազմում, ապա հնարավոր է, որ սկսվի հարկադիր զորահավաք ողջ Ռուսաստանում, եւ դա էլ իր հերթին շարքային քաղաքացիների մոտ նոր վախերի առիթ դառնա: Իշխանական մեդիա-քարոզչական հարթակները, իհարկե, այս ամենը կփաթեթավորեն այնպես, որ Մինսկը մի բան էլ ուշացել է եւ սկզբից պետք է մտներ պատերազմի մեջ: Սակայն, միեւնույն է, պրագմատիկ մտածող մարդկանց դժվար կլինի հետ պահել այն մտքից, որ պատերազմի ուժգնացումը հերթական անգամ կհարվածի տնտեսությանը:

Եթե Բելառուսը ներգրավվի պատերազմում, ապա կդադարի լինել զուգահեռ ներկրումների հանգույց եւ կանցնի ռազմական տնտեսության ռելսերի: Միաժամանակ, Մինսկի նկատմամբ էլ հնարավոր է կիրառվեն խիստ սանկցիաներ, եւ դա կփակի զուգահեռ ներկրումների ուղին դեպի Ռուսաստան: Դա հատկապես կհարվածի մայրաքաղաքային եւ խոշոր քաղաքային բնակչությանը: Մասնագետները նաեւ արձանագրում են, որ խաղաղասերները թեեւ տեսակարար առումով ավելի շատ են, սակայն նրանք երբեւէ չեն կանգնի զանգվածային բողոքի ցույցերի ճանապարհին՝ հասկանալով, թե ուժային ինչ դաժան ճնշման մեխանիզմներ են գործում: Ավելի շուտ՝ հասարակությունը կթաղվի խոր սոցիալական դեպրեսիայի ու ապատիայի մեջ: Մարդիկ ավելի ու ավելի կներփակվեն իրենց մասնավոր կյանքի մեջ՝ հեռու մնալով պետական կամ քաղաքական լրահոսից՝ իրենց հոգեբանական կոմֆորտը պահպանելու համար: Քաղաքագիտական փորձագիտական համայնքում առայժմ դեռ լավատեսություն կա, որ Լուկաշենկոն, լինելով խորամանկ մարդ, որեւէ կերպ լուծում կգտնի, եւ Բելառուսը չի մտնի պատերազմի մեջ: Սակայն Կիեւն ամեն դեպքում դեռ կփորձի այնպես անել, որ Մինսկը, ուզածչուզած, մտնի պատերազմի մեջ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am